ծութիւն, և գովութիւն, ըստ
այնմ, ցնծացէք արդարք 'ի տէր,
ուղղոց վայելէ օրհնութիւն։
Դարձեալ, նախադուշակեցեալ
լինի աներկեւանութիւն 'ի դա-
տաստանի, ըստ այնմ. կացցեն
արդարքն մեծաւ համարձակու-
թեամբ։ Դարձեալ. արդարոց եղա
նի խոստումն յաւիտենականի
կենի, ըստ այնմ, Արդարքն
յաւիտեան կեցցեն։ Այլ զոր ինչ
բարի խոստանայ Ած 'ի սբ գիրս,
մանաւանդապէս ստանի այն 'ի
ձեռն արդարութեան։

Պաշ-

Պաշտօն Ճշմարիտ արդարութեան է, ուղղել զխոկմունս, և զախորժմունս, ոչ զի միշտ 'ի յԱծ իցեն, զկամս, զի լինիցի համակերպ Ածայնոյ կամին, զդիտաւորութիս, զի միշտ 'ի յԱծ իցեն, որով առաւելութի նորին զհամայնս իւր յարաբերիցեմք: Եւ ընդհանրապէս զամն բանս, և զգործս ուղղել, զի միշտ առ Իմն մանաւոր, և ստոյգ վախճան եղանիցին, և 'ի յայտնիկ երևի յայտոյանդիմանունքն Ճշմարիտ արդարութե:

Յայտյանդիմանութիւն անխբաւութեան է, սեփականել ինքեան զայնս, որք յատկականք են ինքեան Այ, Յս, զսէր, զգովութի, զպատիւ, և զվրէժ խնդրութի, կամ զայնս՝ որք են մերձաւորին, կամ պարտին մերձաւորին:

## Յաղագս Բարեխառնութեան ։

### Գլուխ Մետասաներորդ ։

Ո՛Ր մարմին և կատարեալ բարեխառնութիւն է, որ-դար եղանակաւորութիւն շարժմանց ներքնայնոց, և արտաքնոց, և բնաւից գործոց։ Նա ունի զքաջ մարմին բարեխառնութեան, որ ոչ միայն եղանակաւորէ զախտ իւր ՚ի խեղաթիւրից, և յանօգտից մտածմանց, այլ նա և պահէ զեղանակ ՚ի բարիս, մի՛ գուցէ բազմիցս կամ երկարատևոյն ներ յենուցուն մտածմունք բարիք՝ քան զոր պահանջէ արդար ժա-մանակն։ Ոչ զի պաշտօնականք մտածմունք, Թէպէտ օգտակարք լիցին, սակայն չեն կիրառելիք ՚ի մէջ Աստուածայնոյ պաշտօնի, ըստ

բեռնարտոսի՝ որ ասէ։ Ոգին մեր յայնմիկ ժամու զհաճոյն ոչ վերընդունին՝ զոր ինչ այլ մատուցանիցես քան զոր պարտին՝ զանցանելով զայնմանէ զոր պարտին։ Նմանապէս ճշմարիտ բարեխառն եղանակաւորէ ըղկիրս, և զախորժմունս իւրս, երբ զինչ կամ զոչինչ յուսալ պարտիցի, կամ յումեքէ երկնչիլ, կամ ոչ երկնչիլ պարտիցի, և որքան, և ցորքան ժամանակ, երբ զիրէ իմեքէ ուրախանալ կամ ոչ ուրախանալ, կամ ցաւել՝ կամ ոչ ցաւել պարտիցի, և որքան և ցորքան ժամանակ. Երբ զումեքէ զատելութիւն կամ զսէր, կամ զամօթ ունիլ կամ ոչ ունիլ պարտիցի, և որքան, և ցորքան ժամանակ։ Նմանապէս եղանակաւորէ զիմացութիւնն, մի

գո-

պուցէ զբաղեցուցանիցէ զմիքն
աւելի ժամանակաւ, քան զայն
որ պիտոյ է շուրջ զնիւթ իմա-
նալեաւ: Նմանապէս եղանա-
կաւորէ զկամն, որքա՞ն, և ո՞ր
պէսի գոլ պարտիցի, և զդիտաւո
րութիւն, որպիսի և որքան գոլ
ոչ պարտիցի, և առ որ վախ-
ճան: Նմանապէս կշռէ զանձն-
իշխանութիւն թէ որքան պար
տիցի ընտրել զբարին, և որ-
քան անարգել զչարն: Նմանա-
պէս ճշմարիտ բարեխառնութիւն
եղանակաւորէ զլեզուն, ե՞րբ խօսելի, և երբ լռելի է, և
ցորքան ժամանակ, այսէ՝ ի դի-
պուկ ժամանակի: ընդ ո՞ւմ խօ-
սելի, այս է, ընդ մարդկանց ոչ
կասկածելեաց: Երբ խօսելի,
և ո՞ւր․ յո՞, յորում տեղւոջ և
ժամանակի, այս է, ոչ արգե-
լեցելոյ: Որպիսաբար, և որ-

F 2 քան

քան խօսելի է, այս է, մանաւանդապէս հանդերձ չափով, և կշռով. յաղագս որոյ խօսելի է, այս է, յաղագս հարկաւորութեան, կամ օգտակարութեան: Վասն որոյ իրակութեանց. այս է, հոգւոյ և մարմնոյ: Նմանապէս կշռէ զգործս, զքարս, և զշարժմունս ամենից անդամոց, որպէս զի ըստ առաքելոյն, բնաւքն կարգաւորապէս և ուղղին դիտաւորութեամբ, և սիրով, և առ պարտաւոր վախճան եղանիցին:

Ի. ու Ճշմարիտ բարեխառնութիւն պարտի ներածել զմեզ կարգաւորագունեղ իմաստութիւն Ի. ծայրին, որ զհամայնս տրամադրէ չափով, թուով, և կշռով: Արդ ըստ այսմ կարգաւորման, բնաւք գործողութիւնք մեր, կեանք և վարք մեր պարտին գոլ չափեցեալք, թուո

ե-

եցեալք , և կշռեցեալք , այս է , զօրութեամբ Հօր , որում առատրի չափ , զօրութ̃ Որդւոյն , որում առատրի թիւ , զօրութ̃ Հոգւոյն սրբոյ , որում առատրի կշիռն ։ Առ նոյնն պարտի ներածել զմեզ օրինակ բարեխառնութե̃ առաքելոյն , որ ասէ ։ 1։ կորն. 10։ 32։ Առանց դայթակղութե̃ լերուք՝ հրէից և հեթանոսաց , և եկեղեցւոյն Այ , որպէս և ես 'ի համայնս ամենեցուն հաճոյ լինիմ ։ Նա եղև ճշմարիտ բարեխառն , որ զոչոք վշտացոյց , և ընդ ամենայնս ամենեցունց հաճոյացաւ ։

Օյայտյայնդիմանութի ճշմարտի բարեխառնութե̃ ունի , որ զինքն եղանակաւորէ 'ի յապրելիս , 'ի զգենլիս , 'ի քունս , և 'ի յամս հանգստութեիս մարմնաւորս , և 'ի խնդութեիս ժա-

մանակաւորս, ոչինչ աւելորդու-
թին, և զանկարգ հեշտութին,
այլ զսոսկ հարկաւորութին, 'ի
համայնս այսոսիկ ընդունեալ:
Ճշմարիտ բարեխառն 'ի բնաւ-
իրս ջանայ պահել զեղանակ՝ բաց
'ի սիրոյ, 'ի գովութենէ, և 'ի չնոր
հակալութենէն Ա.Յ: Քանզի մե-
ծ է տր, և գովելի է յոյժ: Ո՜
որոյ թարց եղանակի, թարց
չափու, և թարց վերջացուցման՝
է գովելի, և սիրելի:

Յայտյանդիմանութին անբա-
րեխառնութեն է, մինչ ոք
ունելով զվարս խեղաթիւրս,
զամենեսեան որք բնակին ընդ
ինքեան՝ խռովէ և անհանգիստ
առնէ. 'ի յոչինչ համակերպէ
զինքն ումեք, այլ զայն որ ին-
քեան միայն հաճելի գտանի՝ հա
մահաստատէ, և կատարելա-
գործել ջանայ. է ամենեցունց
ան-

անքաւնալի, և իւրեան ինքեան անտանելի ։ Աւստի ասէ օգոստինոս ։ Հրամայեցեր տէր, և այնպէս եղեւ է, զի ամ̃ անկարգմիտք՝ եղիցի ինքն ինքեան պատիժ ։ Ո՞ր քան առաւել այլոց ։ Այսպիսի եղև իսմայէլ ։ Ծննդ 16 ։ 12 ։ զորմէ ասէ գիրն, ձեռք նորին ընդդէմ ամենից, և ձեռք ամենեցուն ընդդէմ նորա ։

## Յաղագս Յաճակցութեան ։

### Գլուխ Երկոտասաներորդ ։

Ճշմարիտ և կատարեալ յաճակցութին առ Ած է, անդադար 'ի սրտի տրտմութե՛ վիրաւորիլ 'ի համայնս անիրաւութիս առ բերեցեալս 'ի յամ̃ն և տակաւին առ բերելիս 'ի նա, և 'ի բարեկամս նորին ․ զորս եթէ

որք հարկանէ, դրեթէ հարկանէ
զբիբ աչաց նորին ։ Վասնզի հա
մայնք տարերք ցաւակիցք եղեն
ը̃ն մերոյ Յ̃ի Ք̃ի մեռանողի
'ի խաչին ։ Ճշմարիտ ցաւակցու
թիւն առ մերձաւորն է, ցա-
ւակցիլ 'ի խորոց սրտէ 'ի վշ-
տակրութիւնս մերձաւորաց՝ այն
քան 'ի հոգևորս, որքան 'ի մար-
մնաւորս, ըստ օրինակի առա-
քելոյն, որ ասէ ։ Ո՞ հիւանդա-
նայ, և ես ոչ հիւանդանամ,
ուր ասէ մեկնիչն. Ո՞ հիւանդա-
նայ հաւատով, կամ այլով ինչիք
առաքինութը̃, և ես ոչ հիւան
դանամ, ա̃յ, ոչ ցաւիմ զնմանէ,
ոպ̃ զինէն, Ո՞ գայթակղի յիմիք
վշտակրութե̃, և ես ոչ տապա
նամ հրով ցաւակցութե̃ ։ Առ
մերձաւորս 'ի քաւարանին Ճշմա-
րիտ ցաւակցութի̃ն է, սաստկա
բար կսկծալ վ̃ս դժնդակութե̃
պատ-

պատժոյն , կորս կրեն, և մա_
նաւանդ՝ զի 'ի տեսութէ և 'ի
զմայլմանէ Ա.Յ առժամանակ
ինչ անջատին, և Ա.Ծ 'ի նոցունց
լիապէս ոչ փառաբանի . և 'ի
յայնմիկ կսկծման, և ցանկ_
ցութե անդադար՝ և ջերմապէս
աղաչել զԱ̄Ծ, ոչ զի կնոսին 'ի
յայնքան դժնդակ, և դառն տան
ջանաց հաճեսցի զերծուցանել :
Առ ճշմարիտ ցանկութին
պարտի ներածել զմեզ առա
տադունեղ ցանկութին Ք.ի
առմեզ, որ ( ըստ սրբոյն Օգոս_
տինոսի ) այնպէս փութայ ար_
ձակել զմեղաւորն 'ի տանջա_
նաց խղճիմտաց , զի գրեթէ
առաւել տանջէ զնա ցանկու
թի ողորմելւոյն, քան թէ տան
ջիցէ զինքն ողորմելին՝ ցանկ_
ցութի իւր : Ոչ միայն ցանկից
եղև, այլ նա և զհիւանդութիս
մեր

մեր նա վերացոյց, և զցաւս մեր
նա եբարձ։ Զսոյնս զայս՝ բնու-
թիւն անդամոց համոզէ մեզ առ-
նել, ըստ առաքելոյն որ ասէ.
եթէ վշտանայ մի անդամ, վշ-
տանան ամ՟ անդամք ընդ նմա։
Դարձեալ. կրկին է օգտութիւն
ցաւակցութեն, որ և այն պար-
տի յորդորել զմեզ առ ցաւակ-
ցութիւն. յր՟. համահաստատու-
թիւն սիրոյն, և թագաւորելն
ընդ Քրի՟։ Ս՟ առաջնոյն ասէ
սիրաք։ 7։ 38։ մի՛ կասեսցիս 'ի
մխիթարելոյ զսգաւորս, մի՛
յուլասցիս այցառնել հիւան-
դաց, և ընդ ողբացողս շրջեաց,
զի յայսցանէ հաստատեսցիս 'ի
սիրելութեն։
Ս՟ երկրորդին ասէ առաքեալն։
2։ տիմ՟ 2։ 12։ եթէ չարչարակիցք
լինիմք, ընդ նմին և թագա-
ւորեսցուք։ Ի՟ նօսրակի է առա-

քի-

քինութիւն ցածակցութեան , զի ասէ տէրն գանկատելով, ակն ունէի , թէ ոք տրտմեսցի ընդ դիս , և ոչոք էր ։

Յայտյանդիմանութի Ճշմարտի ցածակցութե է , ոչ միայն ցածակցիլ բարեկամաց , այլ նաև թշնամեաց ։ Որպէս և յօսէփ ՚ի վ̃ր իւրաքանչիւրոց եղբարց եղաց , որք զնա փոխանակ . 30. արծաթոյ վաճառեցին ։ Նա՛ դաւիթ ողբաց մեծաւ ողբով ՚ի վ̃ր մահուան սաւուղայ , որ զնա բազմիցս յառաջադրեալէր սպանանել , մանաւանդ ուսոյց որդւոցն իսրայէլի զերգս ողբոց ՚ի վ̃ր նորին ։ Որպէս և ՚ի վ̃ր մահուան աբիսողոմայ՝ որ զնա ջնջել կամեցաւ ՚ի թագաւորութէ , ծածկեալ զգլուխ իւր լայր զնա ասելով ։ Ո՞ տայցէ ինձ զի ես մեռայց

ւայց վո՜ քո՜յ որդեա՛կ իմ աբի_սաղօմ։ Եւ նմանապէս յօբ, ող_բայր ( ասէ ) երբեմն 'ի վ՜ր այ_նորիկ, որ նեղեցեալէր, և ցա_ւակցիւր հոգի իմ աղքատին։

Օ յայտյայտնդիմմանութիւն ստոյ ցաւակցութեն ունի, մինչ ոք արտաբերէ զխօսս ցաւակցու_թեն, և զդէմս ցաւակցութեն ցուցանէ, սակայն զվշտակրու_թէ մերձաւորին՝ ուրախանայ 'ի սրտի իւրում, և զտառապանս մերձաւորին մինչ կարէ՝ ոչ թե_թեւացուցանէ, կամ զտառա_պեցեալն՝ երբ կարէ՝ ոչ հանդար_տեցուցանէ, այլ մանաւանդ վայրս նշանաւ, և բանիւ գր_գռէ, և յորդորէ առ 'ի վշտա_ցուցանել։

# Յաղագս Խաղաղութեն։

## Գլուխ Ութեւտասներորդ։

Ճշմարիտ խաղաղութին առ Ա՟ծ է, յորժամ հինգ ըզգայութիք, և կերպարանին ամենից անդամոց, և համայնք գործք արտաքինք առ անհարկումն բանին տրամադրին, նաև ընաւք ախորժմունք, մտածմունք, կամք, և դիտաւորութիք, և համայնք ներքնայինք ըստ կարգաւորման բանին եղանին։ Եւ բանն այն նախապէս լիցի ամենևին ըստ կամաց Ա՟յ կարգաւորեցեալ։ Քանզի որքանիցս թարց հաճանութե բանի թարեպէս տրամադրեցելոյ իր ինչ իրագործի, առժամայն խաղաղութի սրտին վրդովի։

Եւ

Նա ունի զճշմարիտ խաղա-ղութիւն ընդ Այ ( ո՛չ ասէ մեկնիչն ՚ի վ՛ր այնր բանի, որ առ Հռօմայեցիս : Արդարացեալք հաւատով, ունիցիմք զխաղաղու-թի առ Ած : ) որ ընդդէմ պա-տուիրանաց նորին ներհակ կա-մօք ոչ վիճաբանի, որ հեռանի հրամանաց նն, և առ նմ պա-տուիրանս Ածայինս՝ ստորածէ զանձնիշխանութի իւր : Վասն-զի ճշմարիտ խաղաղութին է, համաձայնիլ ընդ բարի կամաց, և վիճիլ ընդդէմ մոլութեց : Նա ունի զճշմարիտ խաղաղու-թի առ մերձաւորն, որ բոլո-րով ջանիւ զգուշանայ, մի՛ գու-ցէ զոք հանդերձ առաջադրու-թբ որով և ինքն վրդովմամբ՝ վրդովիցէ : Եւ զի որ հանդերձ ընտրութբ վրդովէ զոք, ոչ եր-բէք առանց վրդովման ժամ

ինչ գոլ կարէ. քանզի վրդովե-
ցեալն, եթէ կարէ ինքն վրէժ-
խնդիր լինի և եթէ վրէժ առ-
նուլ ոչ կարէ, կեղծէ, սակայն
'ի յեղեղոյ վրդովմանէ միշտ
տանի յինքեան զխայթումն, և
զխղճահարումն մտաց: Նա ին-
դրէ զճշմարիտ խաղաղութիւն,
որ շարունակաբար զիւր ինքն
միայն մտածեալ, և զայլս իւրա-
քանչիւրս վերաթողեալ 'ի յա-
տուկս դատողութիւս իւրեանց,
յետադրելով զայլ ամ՛ հոգս
անցաւորս, վերահանգչի միայն
'ի խոկման Այ. զի անդ միայն
գտանի խաղաղութիւն, ըստ օգոս
տինոսի, որ ասէ: Արարեր զմեզ
Տէր առ քեզ, և անհանգիստ է
սիրտ մեր՝ մինչև հանգիցէ 'ի
քեզ:

Առ սէր ճշմարտի խաղաղու-
թեն պարտի ներածել զմեզ
կրկ.

կրկնակի օգտութին խաղաղութե. ժ՛. քաղցրութի, և համգիստ միայն որ հետևի խաղաղութե։ Իսկ քաղցրութիւնն է իբրև մասն և սկիզբն յաւիտենական հանգստեան, և քաղցրութե։ Պարծեալ. զի պատրաստէ ՚ի հոգւոջ գյաւիտենական, և զհանապազորդ բնակութի Տ՛ն, որ յաղագս սաստկագունի հեզութե իւրոյ՝ միայն ՚ի սրտի հանդարտեցելոյ ունի ըզտեղի, և վերահանգչի, ըստ վկայութե ինքեան Տ՛ն, որ ասէ։ ՚Ի խաղաղութե յայսմ և ՚ի սոյն ննջեցից, և հանգեայց։ Պարծեալ. սաղմոս. ՚ի խաղաղութե եղև տեղի նր. զորմէ վկայէ առաքեալն ասելով։ Օ խաղաղութի ունեսջիք, և ած՛ խաղաղութեան եղիցի ընդ ձեզ։

Ճշմա-

Ճշմարիտ խաղաղութիւն պահ-
պանի այսու, զոր աստ ըմ-
բռնիմս ՚ի վ՛ր թղթոյն առ-
եփեսացիս։ Եթէ զբարիս մի-
մեանց փոխաբերաբար սիրի-
ցեմք, եթէ այնց, որք ուղղե-
լք են, զմեզան՝ որք թարց մինս
առ ցորենոյն կամ հանդերձ
յուսովփրկութե բացախալել ոչ
կարեն՝ մինչև ցվերջին հունձն
տանիցեմք, նաև եթէ զգործս
կատարելութե, որք պատկա-
նաւորք են եղանիլ, կամ ոչ
եղանիլ՝ զի մի տկարք գայթակ-
ղեսցին առնել, կամ ոչ առնել
պատրաստք լիցեմք։

Օյայտյանդիմանութին Ճշմար-
տի խաղաղութե ունին,
որք խորշին յամենից տեղեաց,
յամենից մարդկանց, և յամենից
գործողութեց, յորոց հաւանական-
բար կարէ հեռանալ վրդովմունս։

Դարձեալ․ զատուցապատունեղ յայտյանդիմանութիւն ճշմարտի խաղաղութե ունի, որ ըդ-պատուճիրանօ Ք՟Ի, և զու խոստմանո րէն միշտ և յա՟մ ուրեք պահէ, ըստ սաղմոսին որ ասէ: Խաղաղութի բազում է այնոցիկ՝ որք սիրեն զօրէնս քո: Ճշմարտա-պունեղի խաղաղութե է, յորժամ միաբնին ՚ի համայնս ենթարկիցի հօգւոյն:

Ոյայտյանդիմանութի սուտ-խաղաղութե ունի, որ ոչ խլէ զա՟մ արմատս վրդովմանց, որք միշտ սովորք են բողբոջիլ. և այսոքիկ են, յատկական կամքն, ազատութի հօգւոյն, եղականութի բարուց, և բաղձանք հաճելուն, զորոց այլ ուր գրեցաւ: Դարձեալ. ոչ է ճշմարիտ խաղաղութի, որ ոչ առանի ՚ի յատկէ զօրութենէ, այլ

այլ 'ի շնորհաց այլոց, զո՛ր օրի_
նակ, են ոմանք, որք ունին
զհաստատուն խաղաղութիւն այն_
քան, որքան զոչինչ ներհակու_
թիւն զգան. այլ որ ինչ հաճելի
երեւի ինքեանց՝ զայն գտանեն 'ի
համայնս, բայց մինչ եղանի իր
ինչ, զոր ինքեանք ոչ մտածե_
ցին, կամ որ նոցին նուաղ
հաճոյ է, իսկոյն կորուսանեն
զխաղաղութիւն սրտի, եւ յայն_
ժամ առաքինութիւն խաղաղու_
թեան չէ 'ի նոսին, այլ մանաւանդ
'ի յոտարականս։ Արդ այսո_
րինակ զխաղաղութիւն զայն բա_
ցաբառնան օտարականքն՝ երբ
կամին։ Իսկ որք ցանկան ճշմար_
տի խաղաղութեան ո՛չ պարտին
տրտմադատել թէ զինչ այլք
գործեն, կամ խօսին, կամ
շողոքորթեն, կամ բամբասեն,
այլ միշտ զայնց մտախոհ լինին,

որք են խաղաղութեան. և առաքինութեան խաղաղութեան ստուգապէս և վախճանաբար ընդունասցէ ՚ի նոսին։

## Յաղագս Ողորմածութեան։

### Գլուխ Չորեքտասաներորդ։

Ո՛Չ մարթիս ողորմածութիւն կայանայ ՚ի յերկիս. այլ. ՚ի տալն, ՚ի ներելն, և ՚ի յառատաբաշխելն։ Ո՛չ մարթապէս ողորմածն, ցորքան ժամանակ ունի զեր ինչ, մատակարարէ, և օժանդակէ կարօտելոյ զհարկաւորսն, զոր եթէ ոչ առնիցէր, զՃշմարիտ ողորմածութիւն ոչ համալցուցանիցէր, այլ ոսկեբերանին՝ որ ասէ, եթէ մինչև ցոր վայր ունիս՝ ոչ օժանդակիցես, ոչ երբէք լցուցանիցես զպար-

զպարտդ ։ Քանզի հինգ յի-
մոլիք կուսանքն ունեցան զիւղ,
այլ ոչ զառատ մինչև ցվախ-
ճան ։ Այսպիսի ողորմածութի՟ն
ունէայ յոք, մինչ տայց, ար-
տաքոյ տան իմոյ՝ ոչ մնայր պան-
դուխտն, և դուռն իմ բաց էր
ճանապարհորդաց ․ միթէ զլա-
ցայ զոր կամէին աղքատք, և
աչաց այրեաց ետու սպասել ։
միթէ կերի զպատառն իմ միայ
նակ, և ոչ եկեր անտի որբն,
զի ընդիս աճեցաւ ողորմածու-
թի՟ն, և 'ի յարգանդէ մօր իմոյ
ել ընդիս ։

Իսկ որ տայ զգոյս իւր, և ոչ
ներէ անիրաւութեանց, զոչինչ
ողորմածութի՟ն առնէ, ո՟պ ասէ
Գրիգոր ․ մ՟ն այսորիկ ճշմարտա
պէս ողորմածն՝ նախ քան զգոյն
աղաչեցեալ՝ յօժարի՛ սրտի՛
ներէ ամենից անիրաւութեանց,

ոչ երբէք վրիժառու, ոչ ին-
քեամբ, և ոչ 'ի ձեռն այլոյ.
մանաւանդ ճշմարիտ ողորմածն
պատրաստագոյն գտանի առ 'ի
ներել, քան անիրաւօղն առ 'ի
հայցել զներումն: Քանզի ճշ-
մարտապէս ողորմածն, առա-
ւել ցաւի զմեղս անիրաւօղին,
քան զվշտէ, զոր ինքն տարա-
պարհակ կրէ:

Այսպէս դաւիթ սեմեայ անի
ծանողի, և ընդդէմ ինքեան
զքարինս ձգողի 'ի սրտէ նե-
րեաց, նաև ոչ աղաչողի: Ա՛ն
զի մի 'ի ձեռն բարեկամաց իւր-
ոց սպանցի, արգել՝ ասելով,
գուցէ ո՞ր Ա̃ծ տայցէ ինձ զօրհ
նութիւն փոխանակ անիծից
այսօրիկ: Այսպէս յօսէփ նե-
րեաց եղբարց իւրոց, նախ քան
թէ խնդրիցէին զներումն, լա-
լով 'ի վ̃ն իւրաքանչիւրոցն: Ոչ
բա-

բանական լինին նաև այս՝ Զիմար
տապէս ողորմածին՝ եթէ ոչ
նաև զներութին մ͞ր անխրատողաց
ընդդէմ ինքեան ընկլնուցու յ͞ոյ
աղօթիւք իւրովք։ Այսպէս մն
սէս մ͞ր հրէից որք կամէին քար-
կոծ առնել զինքն, ընկալաւ ըզ
շնորհս յ͞ոյ առնելով։ Կամ թող
նց զայս մեղ, կամ ջնջեա զիս
'ի գրոյն զոր գրեցեր։ Այսպէս
և ստեփաննոս մ͞ր քարկոծողացն
այսպէս և տէրն մեր Յ͞ս ընկա-
լաւ զներութին, և զշնորհս մ͞ր
խաչահանուաց իւրոց, մինչ եր-
կաքանչիւրքն, տ͞ր, թէ ստեփան-
նոս, և թէ տէրն մեր Յ͞ս ասա-
ցին, թող սոցա, զի ոչ գիտեն
զինչ գործեն։ Աստէն սաստ-
կապէս անմեղադրին անխրա-
տողքն, ուր գրեթէ ասիցիւր՝
ոչ ունիցին զգացումն, և մ͞ր այ-
նորիկ խրատաբար չէ համարելի

 նո-

նոցին , այլ՝ խնայելի ՚ի նոսին ։
Ա՟ռ սէր Ճշմարտի ողորմածու-
թեան պարտի ներածել զմեզ
այս ․ թէ Ա՟ծ յիւրում բնու-
թե՟ն գոլով ծայրագունեղապէս
ողորմած , նաև ՚ի յայլս սիրէ
զողորմածութի՟ն ՚ի վերքան զեղա-
նակն, ո՟պ ինքն ասէ ։ Երթայք
ուսարուք , զինչ է , զողորմա-
ծութի՟ն կամիմ, և ոչ զզոհ ։
Եւ այլ ներածիչ ողորմա-
ծութե՟ն, թէ ողորմածն Ա՟ծ
առանց ողորմածութե՟ն դատեսցէ
զայս անողորմն ( ըստ յակոբայ
որ ասէ ) Ա՟նողորմ դատաստան
լինելոց է այնմ , որ ոչ առնէ
զողորմածութիւն ։ Ե՛ ողոր-
մածքն՝ շահեսցին յԱ՟յ զառատ
ողորմութիւն ։ Վանզի փոխ
տայ Ա՟յ , որ ողորմի աղքա-
տին ․ յր՟ , համբերձ մեծաւ տո
կոսիւ , և պտղով վերընդունի

զոր

զոր ինչ աղքատաց առատա-
բաշխէ։

Պաշտօն ողորմածութեան է, համագետեղել զիւրաքանչ-իւրս մերձ Ն.Ջ ըստ արդեան, ըստ այնմ Եկղեսիաստիկեայ. 16. ա՟մ ողորմածութի՟ պատրաստէ զտեղի իւրաքանչիւրոց՝ ը՟ս գոր-ծոց իւրեանց։

Յանդիմանականացուցումն ճշմարտի ողորմածութե՟ է, մինչ որք յինքեանէ բացաբառնայ զայն, զոր կարէ բացաբառնալ, թող-լով միայն զհարկաւորս պահ-պանման կենին։ Սանահանդ-շարունակաբար աշխատի, նաև 'ի վերքան զզօրութի՟ իւր, ո՟պ զի կարիցէ լիագունեղապէս օ-ժանդակել կարօտելոց։

Յայտայանդիմանութի՟ սայ ողոր-մածութե՟ է, մինչ որք որ-քան կարէ ոչ լցուցանէ զհար-կա-

կաւորութիւն իւրաքանչիւրոց , այլ ասէ կարօտելոյն , ( ըստ յակոբայ որ ասէ · երթայք 'ի խաղաղութեան ջեռարուք , և յագեցարուք , բայց ոչ տայցէ նց̃ զայնս , որք են Հարկաւորք մարմ̃նոյն · զի՞նչ օգուտ իցէ և այլն · ) բացասելով նց̃ զհարկաւորս ։ Ուստի ասէ ոսկեբերանն , պիտոյ է նաև 'ի քոյոցն ոչ լինիլ այնքան ժլատ , բայց մինչ գոյք ա̃ն քո` են տուեալ քեզ 'ի փոխ , է՞ր վ̃ն լինիս այդքան ժլատ ։ Դարձեալ , յայնժամ անիրաւողացն ներէ , յոր ժամ զվրէժ առնուլ ոչ կարէ , կամ մինչ անիրաւողաց ներէ , ոչ 'ի պարզ սրտի , այլ վ̃ն այսորիկ , զի գիտէ զա̃ծ ինքեան ոչ ներել , եթէ ոչ ինքն նախապէս ներիցէ՞ կամ թէպէտ լոկ բերանով աղօթէ վ̃ն

զրկո-

զրկողաց իւրոց, սակայն զխայտառակութ՟ն նոցին ուրախանայ ՚ի ներքուստ ։

## Յաղագս Համաձայնութեան ։

## Գլուխ Հնգետասաներորդ ։

ՃՇմարիտ համաձայնութ՟ի աւ մծ՟ է միաւորիլ ընդ Ա՟ծայնոյ կամին՝ ՚ի յաջողութիս, և ՚ի ձախորդութիս ․ և ըստ կարի իւրում համակերպիլ Ա՟ծայնոց վարուց, և օրինակաց Յ՟ի Ք՟ի ։ Քանզի ասէ յօհան ոսկեբերանն, թէ ոչինչ արժանագոյն գտանի քան զայս, զի մարդն լինիցի համահետևօղ հեզինակին իւրոյ, և ըստ եղանակի յատկի կարողութեան գործածօղ Ա՟ծայնոյ գործոյն ։ Զայս միաւորութի ին-

խնդրեաց վն մեր տրն մերձ վախճանի կենաց իւրոց, ասելով։ Հայր՝ որպ դու յիս, և ես 'ի քեզ, այսպէս և սոքա իցեն մի 'ի մեզ։ Պարծեալ՝ Ճշմարիտ համաձայնութիւն ընդ մերձաւորաց է, ընդ ամենեցունց 'ի յամենեսին զնոյն գիտել, և զնոյն իմանալ 'ի յայնոսիկ իրս, որք են առ Ա.Ծ, որպ 'ի նախկնական եկեղեցւոջ բազմութիւն հաւատացելոց էր մի սիրտ, և մի հոգի 'ի յԱծ. ու, որքան առային համայնս, որք պատկանէին առ Ա.Ծ։ Պարծեալ, համաձայնիլ ընդ այլոց 'ի կերակուրս, 'ի յըմպելիս, 'ի նիրհմունս, 'ի բարս, և 'ի գործս, որք չեն ընդ դէմ Ա.Յ, և ոչ ընդ դէմ պաշտօնին իւրոյ, զի զյոլովագոյնս շահիցիմք. որպ նաև առաքեալն եղև տկար ը տկարս,

մա-

մանաւանդ է ամենից ամ՛ եղև,
զի զամենեսեան շահիցէր։

Ու սէր ճշմարտի համաձայ-
նութե՟ պարտի ներածել
զմեզ այս, զի յոյժ գովելի է
և յոյժ հաճելի Ա՟յ, համա-
ձայնութի՟ եղբարց։ Ո՟ղ ինքն
ասէ 'ի ձեռն սաղմոսին, 'ի յերկս
նիս հաճոյանայ հոգի իմ, որք
են ընդունելիք առաջի Ա՟յ, և
առաջի մարդկանց. այ՟, համա-
ձայնութի՟ եղբարց, և այլն։
Վասնզի այսու մարդիք ողոր-
մելիք՝ պահեն 'ի յերկրի զայն,
զոր հրեշտակք ոչ կամեցան
պահել 'ի յերկինս։ Ու նոյնն
պարտի հրաւիրել զմեզ ջանն
Ք՟ի, առ 'ի առնել զհամաձայ-
նութի՟ 'ի մէջ մարդոյն, և Ա՟յ.
և 'ի մէջ առաքելոց, մինչ 'ի
մէջ նոցին եղև վէճ, թէ ո՛ 'ի
նոցանէ համարիցի գոլ մեծա-
գոյն։

դոյն։ Ա՛յ մինչ զայրացան տասն առաքեալքն 'ի վ՛յ յակոբայ՝ և յոհաննու, այնու զի կամէին նստիլ ընդ աջմէ, և ընդ ահեկէ նորին, 'ի համայնս յայսոսիկ համաձայնեցոյց զնոսին Ք՛ս։

Յայտյանդիմանակցուցումն ձչ մարտի համաձայնութեան առ Ք՛ծ է, վկայութիւն խղճի մտաց՝ ոչ գոլ պատշաճեցեալ ծանրերբք մեղօք, ըստ որում առաքեալն ունեաց, ասելով զինքենէ. զոչինչ խղճ ունիմ 'ի յիս։ Ա՛յ երանելին յոյժ ասէ. Ք՛անզի և ոչ յանդիմանեաց զիս միտք իմ 'ի բոլոր կեանս իմ։ Պարգևեալ ( ասէ ) ունեցայ զջերմեռանդ ցանկութիւն յառաջանալոյ 'ի բոլոր կեանս իմ, և 'ի համայնս բարիս ըստ կարգաւորման Ք՛ի։

Օյայտ

Օյայտյանդիմանութիւն ճշմար-
տի համաձայնութեան առա-
մերձաւորն ունի նա՝ որ առ հա-
մայնս այնքան սրբաբար ունիցի
զինքն, մինչ զի, ոչ ոք զնմանէ
ունիցի զտրտունջ, նաև ոչ
զբան չար ունիցի զնմանէ խօ-
սիլ: Նա՛ զերկաքանչիւր յայտ-
յանդիմանութեն ունեցան ծնօղքն
յօհաննու մկրտչին, քանզի եր-
կաքանչիւրքն էին արդարք առա
ջի ԱՅ, և գնային յամ պատ
ուիրանս՝ և 'ի յարդարութիւնս
տն առանց արտնջանաց: Նմա-
նապէս յուդիդ ունեաց զեր-
կաքանչիւր յայտյանդիմանու-
թիւն, զորմէ գրեցեալ է, էր
առամենեսեան համբաւաւորա-
գունեղ, և չէր ոք՝ որ խօսիցէր
զբան չար զնմանէ. զա զի յոյժ
երկիւղած էր յոյ:

Յայտյանդիմանութիւն սորյ համաձայնութե՛ ՚ի մէջ Այ և մարդոյ է, յորժամ ոք՝ ոչ մտադրութբ̄ քննէ զխիղճմտաց իւրոց. և այսպէս ՚ի ձեռն միջնորդականի խղճի մտաց իւրոց, համարի զինքն հաճոյանալ Այ, մինչ ՚ի համայնս իրս անհաճոյ գտանի նմ: Ա՛ և այլ յայտյանդիմանութի տարաձայնութե՛ ՚ի մէջ Այ և մարդոյ, մինչ անհաճոյ թուի մարդոյ՝ Ածային կարգաւորութիւն շուրջ զստեղծուածովք, և վարք և օրինակք Ածայինք, և գործք սրբազանեղք Յսի Քսի: Աստի գրեալ է, եւ հաճելի Այ այն, որում անհաճոյանայ Ածն:

Յայտյանդիմանութիւն սորյ համաձայնութե առ մերձաւորն ունի նա, մինչ գործք բարիք, և վարք մեր անհաճոյք թո-

թուին նոքեան 'ի սրտի իւրում, զորս սակայն երբեմն բանիւք գովաբանէ։

Օյայայանդիմանութե՛ն տարաձայնութե՛ն ունի նա, որ զզգացումն իւր նախադասէ այլոց, և զզգացումն այլոց՝ միշտ ջանայ քարշել զկնի իւր. կամ միշտ կարգադրէ, և ոչ երբէք զզգացումն իւր միաւորել ընդ զգացման այլոց առաջադրէ։

## Յաղագս Հաստատութեան։

### Գլուխ Վեշտասաներորդ։

Ճ՛շմարիտ և կատարեալ հաստատութի՛ն է, մինչ մարդ ո՛չ 'ի յաջողութիւնս, և ո՛չ 'ի ձախորդութի՛ս յետս քարշի 'ի կատարելութե՛նէ, ո՛չ սաէ յօբ, մինչև սպականեցայց ո՛չ



բա-

բազմադնացից յանմեղութենէ իմմէ ։ Մ̃ն զի զարդարութի՛ն՝ զոր կանխու՛լ սկսայ, ոչ բացա-թողից ։ Ը. յապախտի՛ն՝ ո՛չ սպառ-նալեօք, և ո՛չ ողոքանօք կարէ ներածել առ յանցումն ուխտից, և պատուիրանաց Ը. ծայնոց ։ Ո̃ղ եօթն եղբարք՝ ի գիրս մա-կաբայեցւոց, որք չարչարեցան հատմամբ լեզուաց, քերթեց մամբ մորթոց գլխոց, կտրեց-մամբ մատանց ձեռաց՝ և ոտից, և ձգեցմամբ կենդանւոյն 'ի պոյտս պղնձեայս ։ Եւ եղիզարոս ո՛չ կամեցաւ ուտել զմիս ասօ-րինաւոր ընդ կեղծման. այլ ասաց՝ թէ մանաւանդ կամի մե-ռանիլ՝ քան տալ գայթակղու-թի̃ պարզամտաց ։

Նա ունի զճշմարիտ հաստատու-թիւն, որ ոչ երբէք դադարի յանծայնոյ գովութենէ . ըստ

այնմ

այնմ սաղմոսի որ ասէ. Օրհնե-
ցից զՏր յամ ժամ, յամ ժամ
օրհնութի նր 'ի բերան իմ, և
այլն։ Իսկ ո՛չ դադարել 'ի ջեր-
մեռանդէ բղձէ յառաջանալոյ։
Ուստի ասէ լեօն պապն, ոչոք
յայսմիկ կենի կարէ գոլ կատա-
րելագոյն, և սրբագոյն, որ ո՛չ
ունիցի զիղձ յառաջանալոյ. զի
իւրաքանչիւրոք անդ անկանի
'ի յորոգայթ դադարելոյ 'ի յա-
ռաջացմանէ, ուր յետադէրէ
զբաղձան յառաջանալոյ։

Առ ճշմարիտ հաստատութիւն
պարտի ներածել ըզմեզ
հաստատութիւն մարտիրոսաց, և
մենաւորաց կուսանաց, որք 'ի
սեռի բեկմանաւորութե 'ի ձեռն
հաստատութե արդիւնաւորե-
ցան զփառս յաւիտենականս։
Բայց եւս առաւել պարտին յոր-
դորել զմեզ առհաստատութիւն

կամակորութ՟ի հրէից, հերետի_
կոսաց, և յանդգնութ՟ի խե_
ղաթիւրից արանց 'ի չարութ՟իւ
իւրեանց, որք վ՟ն անհաւատար
մութ՟ե և խստապարանոցութ՟ե
անօրէնութ՟եց իւրեանց ունին
'ի խղճմտանս իւրեանց զծանրա
գոյնս տանջանս 'ի ներկայիս, և
ծանրագունեղից պատժոց հոգ_
ւոյ և մարմնոյ սպասեն 'ի հան_
դերձեալն։

Յայտյանդիմանութ՟ի ճշմար_
տի հաստատութ՟ե է, մինչ
որ ո՛չ վ՟ն կորստեան մարմնոյ,
և ոչ վ՟ն կորստեան իրաց ըա_
դարի յայնց ամենից, որք են
հաճոյք Ա՟յ։ Ո՟չ ոչ դադարե_
ցաւ՛ Տօբիթ 'ի թաղելոյ զմե_
ռեալս, որոյ վ՟ն արքայն սենե_
քէրիմ մերկացոյց զնա յո՟մ
ընչից իւրոց, և եւս հրամայեաց
սպանանել։ Նայպէս և առա_

քեալք

քեալք յետ յարութեան քո՛ւ ոչ վ՛ն ահի ձաղանաց, և ոչ վ՛ն երկիւղի մահուան դադարեցան 'ի յայտնելոյ զանունն քո՛ւ, ատելով հակառակորդացն, որդեօք Ա՛Յ առաւել պարտ է հնազանդիլ, թէ մարդկանց՝ դուք ինքնին դատեցէք:

Պարծեալ, յայտյանդիմանութի՛ անհաստատութեան է, մինչ ոք վ՛ն հաճոյից մարդկան, կամ վ՛ն շահատամութե բացահեռանայ 'ի ճանապարհէ արդարութե, որ՛պ բաղաամ վ՛ն ընծայից բաղակայ արքային՝ ընդդէմ հրամանի տ՛ն կամեցաւ անիծանել զժողովուրդն իսրայելի. կամ՝ վ՛ն երկիւղի իւրոց ժամանակաւորաց, որ՛պ մեծատունն այն հեռացաւ 'ի տ՛նէ յո՛է տրտմեալ՝ մինչ յորդորեաց զնա առ կատարելութի. քանզի ու-

նէր զինչս, և զստացուածս բա
զում զորս սիրեալէր ։ Կամ
վ՟ն երկիւղի մարմնոյն՝ ո՟պ ա՟մ
առաքեալքն 'ի սիրեցելոյ տ՟նէ
իւրեանց յ՟ետ փախեան ։ Բայց
մատաթիա խոտեալ զընծայ_
եալ պատիւն 'ի հրեշտակաց
արքային անտիոքոսի, և զխոս_
տումն ընծայից , և նա թող_
եալ զա՟մ ինչս իւր փախեաւ 'ի
լեառն՝ զի պահիցէր զօրէնս ա՟յ ։
Պարծեալ․ ոչ բաղձան բարե_
կամութե արքայականի , և ոչ
երկիւղ իրաց ժամանակաւորաց
յետս քարշեաց զնա 'ի ճանա_
պարհէ արդարութե ։ Նմանա_
պէս և ոչ երկիւղ մարմնոյն
յետս քարշեաց զերանելին ստե
փաննոս 'ի ճանապարհէ արդա_
րութե ․ այլ հայելով 'ի յեր_
կինս՝ 'ի մէջ տառապանաց քար_
կոծման՝ սևեռեցեալ յարատև_
եաց

եաց 'ի քն̃ ։ Նմանապէս և պօղոս որ ասաց , ոչ միայն կապել , այլ և մեռանել պատրաստ եմ վն̃ անուան տն̃ յս̃ի ։

## Յաղագս Առատաբաշխութեան ։

### Գլուխ Եօթնեւտասներորդ ։

Ճշմարիտ և կատարեալ առատաբաշխութիւնն է այն, մինչ որք ոչ միայն զիրս ժամանակաւորս ըստ կարի իւրում առատաբաշխէ զուարթաբար ամենից կարօտելոց , այլ նաև յօժարաբար հաղորդէ ամենից կարօտելոց զհոգևոր բարիս պիտոյացեալս, ոպ̃, 'ի խոստովանութ̃իս, 'ի քարոզութիւնս , 'ի խորհրդատուութ̃իս, և 'ի վար_դապետութ̃իս, և ոչ միայն յան կացողացն այսպիսեաց զանձնի պատ_

պատրաստ, այլ նաև մանաւանդ հաղորդէ ոչ ցանկացողաց վարդապետութեն, և քարոզութեն, ըստ խորհրդատուութեն առաքելոյն՝ որ ասէ. հաս 'ի ժամու, և 'ի տարաժամու. և ևս մանաւանդ ոչ կամեցողաց, և ոչ գիտողաց առաջի Տ՟Ն հաղորդէ զապօթս, զհեծութիս, և զողբս: Իսկ մարդն՝ առայս՝ զի լինիցի Ճշմարտապէս առատաբաշխ, պարտի զինքն բոլոր ողջակիզել 'ի յուսմունս, 'ի մտածութիս, և շարունակաբար՝ 'ի գործս սէս վ՟ն կեցութեն մերձաւորաց: Ուայս առատաբաշխութի պարտի ներածել զմեզ բաղձանս համակերպութեն Տ՟Ն, որ այնքան հանապազորդաբար տայ ամենից զիւրս պարգևս ժամանակաւորս, և զհոգևորս՝ նաև ոչ խնդրողաց, և 'ի վ՟ն

այսր

այսր ամի զմարմին և զարիւն
սիրելագունեղի որդւոյ իւրոյ ։
Նա՛ ոչ բաւականանայ նմ՟ տալ
զիւրս պարգևս պարզապէս ,
եթէ ոչ նաև զիւր ինքն՝ որ է
անչափ , տայցէ ընդ իւրաքանչ
իւրոց պարգևաց ։ Գրուա՛ծէ
Ա՟ծ զառատաբաշխութի՟ իւր՝
զի ո՛չ ումեք բացասէ զպարգևս
իւրս , ո՛րքան և հակառակիցի իւր
եանն , մանաւա՛նդ բազմիցս 'ի գի_
շերի և 'ի տուընջեան առատա_
բաշխէ զպարգևս իւրս՝ իւրա_
քանչիւրումումեք , թէպէտ ու_
րեք ուրեք ցուցանիցի ։

Ցուցանէ նաև այսու զառա_
տաբաշխութի՟ իւր , որ յո_
րում և իցէ ժամու երբ գտանէ
զպատկանաւորութի՟ իմն 'ի յըն_
դունողն , առժամայն 'ի ար_
տահեղլոյ զիւրս հոգևորս պար
գևս ոչ երբէք կարէ զինքն դա_

դարեցուցանել, Թէպէտ իւրով
Եծայնով իմաստութբ նախա_
ձմնաչիցէ թէ վերընդունօղն
զայնս պարգևս 'ի մերձաւոր
ժամանակի պարտի կորուսանել,
կամ զայնս խնկոյն բացամեր_
ժել, և կամ նոքօք մարտնչիլ
ընդ դէմ նր: Եւ նոյնն պար_
տի ներածել զմեզ. թէ օտարք
են այնք զորս տամք: Ուստի
առակ է, թէ ընդարձակք
խրացք 'ի կաշեաց օտարաց՝ խզին:
Ըստ որում ասէ ոսկեբերանն,
պիտոյ է նաև 'ի քոյոցդ ոչ լի_
նել այնքան ժլատ, բայց մինչ
գոյք տն քոյ՝ են տուեալ քեզ
'ի փոխ, է՞ր վն լինիս այդքան
ժլատ:

Յայտյանդիմանութի ճմար_
տի առատաբաշխութե է,
մինչ որք տայ զիւրս կարօտելոց
զուարթաբար՝ առանց արդեան
ուրուք՝

ուրուք՝ ձրի, և առանց յուսոյ վերահատուցման։ Այսպէս տ̃րն մեր ետ զիւր ինքն, և զիւրսն։ Ա՛ այսպէ՛ մեծագունեղի կատարելութե՛։

Ճշմարիտ առատաբաշխին ո՛չ բաւականանայ տալով զիւրսն, այլ նաև վ̃ն փրկութե՛ մերձաւորաց՝ ի ժամանակի հարկաւորութեան մինչև ցմահ ընծայէ զիւրինքն, ո̃պ ուսուցանէ յօհաննէս՝ ասելով. Ո̃պ ք̃ս եդ զանձն իւր վ̃ն մեր, այսպէս և մեք պարտիմք դնել զանձինս վ̃ն եղբարց։ Սակայն առայս մանաւանդ պարուանդին առաջնորդք։ Ուստի զայսպիսի առատաբաշխութիւն ունեաց առաքեալն, ասելով։ Բայց ես մտադիւրութ̃բ ծախեցայց վ̃ն հոգւոց ձերոց։ Դարձեալ. նոյնն ասէ, հանապազորդ մեռանիմ

վ̃ն

վն̃ պարծանաց ձերոց, ﬕ̃, կրեմ զվտանգս մահու։

Ճշմարիտ առատաբաշխն Թարց յուսոյ վերահաստուցման տայ տն̃ զբոլորն, որ է, և զոր ունի, և զոր կարէ առյաւիտենական ածուﬕ ՚ի ծայնոյ գովութե, և առմշտնջենական ցնծութիւն իւրաքանչիւրոց հրեշտակաց, և սրբոց, և առդարձումն իւրա_քանչիւրոց մեղաւորաց, և առ պահպանումն, և համահաստա_տումն կատարելութե իւրաքանչ_իւրոց արդարոց և կատարե_լոց, առ մեղմացուցումն, և կարճացուցումն պատժոց իւրա_քանչիւրոց մաքրելեաց։

Յայտյանդիմանութիւն սորա առատաբաշխութե է, մինչ ոք տայ զիւրս՝ զի գովիցի յայ_լոց, զի մի վերահայեցմամբ տու_ողացն անարգագոյն համարի_ցի,

ցի, կամ զի 'ի յաղաղակէ աղ_
քատաց զերծանիցի, և յայն_
ժամ զիրն և զարդիւնն կորու_
սանէ։

Դարձեալ. սուտ առատա_
բաշխ է, որ տայ զիւրս վ̅ն
հարկադրութե՛, կամ վ̅ն շնորհ
առութեան, կամ վ̅ն յուսոյ
շնորհի 'ի ներկայի, և փառաց
'ի հանդերձելում, և կամ վ̅ն
երկիւղի դատաւորին՝ որ հրա_
մայէ տալ, որոյ հրամանի պան
ցառնօղն ոչ մնայ անպատիժ։

## Յաղագս Ճշմարտութեան։

### Գլուխ Ութնուտասներորդ։

Արդար ճշմարտութիւն այն է, երբ ճշմարտապէս համաձայնին իրերաց՝ միտն, լեզուն, և գործքն։ Այլ զի զոր զգայ ոք ՚ի սրտի, զայն արտաքերիցէ բերանով, և կատարեսցէ գործով, ըստ օրինակի առաքելոյն, առ որ հրաւիրէ զմեզ ասելով. եղերուք հետևողք ինձ, և ուշադիր լերո՛ւք. Փլպ. հետևեցէ՛ք այնոցիկ՝ որք շրջին (մեկնիչն) ըստ կերպի մերում. Փլպ. որպ ես հաւատամ, ուսուցանեմ և կեամ։ Նա է ճշմարտախօս, որ զամ ուխտս իւր առ Ած և առ ամ մարդիկ անփոփոխելաբար պահէ, և զամն

խօսս

խօսս իւրս միանգամ ասաց_
եալս գործով կատարէ, եթէ ոչ
երբեմն փրկաճետականաւ խորհր
դով փոփոխիցէ զայնս , ըստ
այնմ զոր ասէ իգնատիոս , 'ի
խոստմունս չարս խզեա զկապ
հաճատարմութե , և 'ի ուխտս
վատթարս փոխեա զմիտս :
Որպէս տրն մեր երբեմն փո_
խեաց զմիտս իւր, ոպ յայտ է
'ի յեզեկիա :
Վանզի զեզեկիա մեռանելոց
գոլ 'ի ձեռն եսայեայ նախա_
գուշակեաց , սակայն զկնի ող_
բացման նորին՝ յաճել նմ զամս
հնգետասան : Այլ զնինուէ 'ի
մէջ քառասնից աւուրց կործա_
նելոց գոլ քարոզեաց 'ի ձեռն
յօնանու , զոր վս խոնարհութե
թագաւորին , և ժողովրդեան՝
ոչ կործանեաց :

Ու_

Սու սէր ճշմարտութե՛ան պարտի
նկարածել զմեզ այս՝ թէ
քն̃ է ճշմարտութի՛ւն, և զի ճշ_
մարտութի՛ւն միշտ ըստ ինքեան
է սիրելի։ Իսկ թէպէտ երբեմն
առօմանս ծանր՝ և անտանելի
իցէ ճշմարտութի՛ւն, սակայն այս
ո՛չ եղանի 'ի կողմանէ ճշմար_
տութե՛ան, այլ՝ 'ի կողմանէ խե_
ղաթիւր կամաց նոցին, զոր յօ_
ժարութե̃ կատարիցէին՝ եթէ
զճշմարտութի՛ւն ներհական ին_
քեանց ո՛չ ունիցէին։ Ողջախո_
հից՝ և խոնարհաց սիրելի է ճշ
մարտութի՛ւն, որ դրոշմատէ զող_
ջախոհութի՛ւն, և զխոնարհութի՛ւն։
Ճշմարտութի՛ւն գարշի 'ի հպար
տութենէ, և 'ի վավաշոտութենէ ·
վն̃ զի յոյժ ներհական է ան_
պարկեշտից, և հպարտաց · զի
զցանկութի՛ւն հաստատեցին 'ի
ներհականս։ Պարճեալ · զի

Ճշմարտութիւնն յաղթէ զամե-
նեսեան, որ̃ ցուցաւ 'ի գիրս
եզրասայ: Նա՛ զի ճշմարտութի̃ն
է անփոփոխելի, որ̃ ասէ տ̃րն,
դիւրագոյն է երկնի և երկրի
անցանել, քան թէ անցանել բա
նին իմոյ:

Յայտյանդիմանութի̃ն ճշմար-
տութե̃ է, մինչ ոք ոչ մի̃
օժանդակութե̃ ուրուք, և ոչ
մի̃ յատկի օգտութե̃ իւրոյ, և
ոչ մի̃ կորստեան իրաց, և մար-
մ̃նոյն բացարձակենու յինքենէ
զճշմարտութի̃ն, ոչ կեղծէ, և
ոչ պատրուճակէ այլուք իրօք,
ոչ երբէք առաջադրութե̃ խօսի
զինն սուտ, և ոչ առաջադրէ
խօսիլ. ոչ ըննաւ փոփոխէ ըզ-
բանս իւրս միանդամ ասաց-
եալս, եթէ ոչ մի̃ պատճառի
հարկաւորութե̃, ըստ օրինակի
բաղձամայ մարդարէին որ ասէր,

եթէ բաղձակ արքայ տայցէ ինձ զտունս լի արծաթով՝ ոչ կարեմ անել զայլ ինչ քան զայն՝ զոր ասացեալ իցէ ինձ Տր՟ , և նմանապէս ըստ օրինակի երեմիայի , միքեայ · դանիելի , և այլոց մարգարէից , որք ոչ յիմեքէ պատճառէ յաղթիլ կարէին , ոպ՟ զի խոտորիցէին 'ի ճշմարտութենէ , բանիւք , կամ գործովք :

Յայտյանդիմանութի՟ ստութե՟ է , զայլ ինչ ունիլ 'ի բերանոջ , և զայլ ինչ 'ի սրտի , և փոփոխել զբանս իւր թարց օգտակարի , և հարկաւորի պատճառի : Նյնպիսին ոչ միայն խոկապէս ստասաց է , այլ և մնտոնից ճշմարտութե՟ , ( ոպ՟ ասէ ոսկեբերանն ) որ անդրանցանելով զճշմարտութե՟ յայտնապէս փոխանակ ճշմարտութե՟ խօսի

խօսի զսուտ ։ Այլ և նա, որ ո՛չ ազատաբար արտաբերէ ըզ ճշմարտութի՛ւն, զոր ազատաբար պիտոյ է՛ արտաբերել, կամ որ ո՛չ ազատաբար ջատագովէ զճշմարտութի՛ւն, զոր ազատաբար պիտոյ է ջատագովել՝ է մատնիչ ճշմարտութե՛ան ։ Վ̃ան զի ո̃պ քահանայն պարտական է, զի զճշմարտութի՛ւն զոր լուաւ յո̃յ ազատաբար քարոզիցէ, այսպէս և աշխարհականն պարտական է, զի զճշմարտութի՛ւն զոր լուաւ 'ի քահանայից համահաստատեցեալ 'ի ս̃բ գիրս, ջատագովիցէ համարձակաբար, զոր եթէ ո՛չ առնիցէ, մատնիչ ճշմարտութե՛ան է ։

## Յաղագս Հեզութեան։

### Գլուխ Իննեւտասաներորդ։

Ո՛չ միայն հեզութ՛ին կամ քաղցրաբարոյութիւնն է յորժամ մ՛ն առաձեցելոց անիրաւութեանց միտն ո՛չ երբէք դառնանայ, և ոչ դառնութիւն սրտին ցուցանի առ արտաքս, այլ է իբրև զմարդ ոչ լսօղ, և ոչ ունօղ 'ի բերանի իւրում զկշտամբանս, ըստ օրինակին յ՛ի, որ ասէ, Ես իբրև զգառն հեզ, որ տարեալ լինի առ 'ի զոհել, և որ առաջի կտրչի անմռունչ կայ, և ոչ բանայ զբերան իւր։ Ըստ այսմ ասէ մեկնիչն 'ի վ՛ր մատթէոսի, հեզ է, զոր դժնդակութ՛ի կամ դառնութ՛ին միայն ո՛չ վրդովէ, այլ պար-

պարզութի̃ հաւատոյն ներկրթէ զնա առ՚ի կրել զի̃մ՛ անխրա-ճութի̃ ։ Հեզ է, զոր ոչ զգածէ ոխակալութի̃, և բարկութի̃, այլ զհամայնս հաւասարաբար տանի ։

Այսորիկ առաքինութե̃ մեծի իբրու վարդապետ արար զինքն տե̃րն մեր, զոր ոչ արարեալ-իցէր, եթէ ոչ առաքինութի̃ս այս իցէր ի̃մ ծայրագունեղի կատարելութե̃ ։ Ասէ, ուսարուք յինէն, զի հեզ եմ՝ և խոնարհ սրտիւ ։ Հեզն ոչ դառնացու-ցանէ, և ոչ դառնանայ, ոչ վնասէ, և ոչ վնասել խոկայ ։ Հեզ է՛ որ տիրէ՚ի վ̃ր բարուց չարեաց, զայսոսիկ զամենեսեան ասէ մեկնիչն ։

Առ սէր հեզութե̃ պարտի նե-րածել զմեզ՝ երանութի̃ն խոստացեալ. յինքենէ ք̃նէ, որ

ասէ։ Երանի հեզոց, զի նք ժա-
ռանգեսցեն զերկիր։ Օգոստի-
նոս ասէ. Հաստատամ գոլ զայն
երկիրն, յորմէ ոչ կարեն ար-
տաքսիլ, ըստ սաղմոսին որ
ասէ, իսկ որ հեզք են ժառան-
գեսցեն զերկիր, և փափկասցին
՚ի բազմութն խաղաղութեան։
Եւ պետրոս ասէ. Հեզոցն տա-
ցէ զշնորհս։

Յայտյանդիմանութի Ճշմար-
տի հեզութն է, մինչ միտն
՚ի մէջ նեղութն ոչ տրտնջայ,
ոչ զխածատօղս բանիւք հա-
կառարձաբար խածատէ, և այս
պէս ոչ ցուցանէ ՚ի յերեսս իւր
զդառնութի ինչ, այլ պահէ
զսիրտ իւր հանդարտ առ ՚ի նե-
րողնակեցուցանել միշտ ՚ի նմին
զա̃ծ։

Յայտյանդիմանութիւն սուտ
հեզութն է, մինչ մարդ-

ար-

արտաքերէ զբանս կակուղս, և հեզս, և զդէմն իւր ցուցանէ հեզաբարոյ, և սակայն կրէ 'ի սրտի իւրում զծանր դառնու_թիւն:

## Յաղագս Հաւատոյ:

## Դասախօս Ութսներորդ:

Ո՛Ր մարթ հաւատն է, հա_ւատալ զհայր, և զորդի, և զսուրբ ոգի զոր ճշմարիտ Ա՛ծ, և թէ յայտնին երիս անձինս գոյ մի անքաժանելի ա՛ծութի, հաւասար փառօք, համայաւի_տենական հանդիսաւեհութք, իւրաքանչիւրն նոյնն է ան_ստեղծ, անչափ, յաւիտենա_կան, ծայրագունեղ բարի, իմաստուն, ամենակարօղ, Ա՛ծ, և տ՛ր: Այլ ոչ են երեք ան_

ստեղծք , երեք անչափք , երեք
բարիք, երեք յաւիտենականք,
երեք իմաստունք , կամ երեք
ա̃ծք , կամ երեք տէրք , այլ
է մի անստեղծ , և այլն: Եւ՛'ի
յերիս անձինս, ոչ ոք է յառա_
ջագոյն, կամ յետնագոյն, այլ
համայաւիտենականք են. և ոչ
ոք է փոքրագոյն՝ կամ մեծա_
գոյն , զի ընդ ամենայնս , և
յամենեսին համահաւասարք են:
Սակայն տարբերին յատկութ̃ք,
զի հայր է անծին, ոչ յումեքէ
ունող զսկիզբն : Իսկ որդին է
ծնեցեալ 'ի հօրէ, լոյս 'ի լուսոյ,
Ա̃ծ ճշմարիտ , յա̃յ ճշմարտէ.
ոգին սբ̃ ոչ է ստեղծեցեալ, և
ոչ ծնեցեալ , այլ բղխեցեալ
հաւասարապէս յերկաքանչիւր_
մէ: Դարձեալ. ճշմարիտ հա_
ւատն հրամայէ հաւատալ, թէ
տէր յս̃ քս̃ է ճշմարիտ Ա̃ծ , և

ճշ_

ճշմարիտ մարդ, յաւիտենակա-
նաբար ծնեալ 'ի հօրէ ըստ
Ա՟ծութեն, ժամանակաւորա-
բար ծնեալ 'ի մօրէ ըստ մարդ-
կութե. և համայնիւք հաւա-
սար հօր ըստ Ա՟ծութե, որ էառ
զհոգի բանական 'ի յոչնչէ, և
զմարմին 'ի մաքրագունեղէ յարե
նէ երանեցելոյ կուսին մարիա-
մու. անչարչարելի և անմահ ըստ
Ա՟ծութե, չարչարելի և մահ-
կանացու ըստ մարդկութեան։
Դարձեալ. ունօղն զճշմարիտ
հաւատ, հաւատայ զամ՟ն մա-
սունս հաւատոյ՝ հաստատապէս,
և աներկբայաբար, այնքան զայ
նոսիկ՝ որք պատկանին առ Ա՟ծ-
ութին ք՟ի, որքան զայնոսիկ՝
որք պատկանին առ մարդկու-
թին նորին։

Ու ճշմարիտ հաւատն պարտի
ներածել զմեզ հաւատնալ

նեաց

նեայ հաւատացելոց․ այսինքն, աբրահամու, իսահակայ, յակոբայ, մօսիսի, և նմանեաց։

Նաև հեթանոսաց, ՚ի, յոբայ, ռահաբ պոռնկին, և նմանեաց։

Այսու ամենեքեանք նախահարք հաճոյացան այ, և առանց հաւատոյ անկարելի է հաճոյանալ այ, որպ ասէ առաքեալն։

Ու և նոյնն պարտի ներածել զմեզ կրկնակի օգտութի հաւատոյ։ Վանզի ճշմարիտ հաւատն զամ ինչ կարէ, զամ զոր խնդրէ առնու, ըստ վկայութե ոն մերոյ Յսի Քսի, որ ասէ։ Ամ ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայ, և զոր ինչ աղօթս արարեալ խնդրիցէք, և հաւատայցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ։ Նաև թէ ասիցէք լերինս այսմիկ, անկիր՚ի ծովն, և այլն։ Որպ լե-

րինք

րինք կապելոյ 'ի խնդրոյ աղեք-
սանդրու ժողովեցան 'ի միասին։
Յայտյանդիմանութի ճշմար-
տի հաճոյ է, յաճախա-
կի կրթութի 'ի գործս բարիս։
Զի ոպ՟ մարմին առանց հոգւոյ
մեռեալ է, այդպէս հաւատ՝ ա-
ռանց գործոց մեռեալ է, ոպ՟
ասէ յակոբոս։
Յայտյանդիմանութիւն սուտ
հաճոյ է, ոչ հաճատաւ
գրոց 'ի համայնս, այլ՝ համա-
րիլ՝ թէ ընաւքն եղանին 'ի ճա-
կատագրից, կամ 'ի ընթացից
բնութեան, և ոչ 'ի նախախնա-
մութենէն Տն։ Դարձեալ. ասէ
ոսկեբերանն, թէ զ՟ծ դու ոչ
հաճատայ նա, որ զայնպիսիս
իրս 'ի ներկայութե Տն առնէ
թագնաբար, զորս հրապարա-
կաբար 'ի ներկայութե մարդ-
կանց առնել ամաչէ։ Դար-
ձեալ.

ձեալ · ասէ Հերօնիմոս , ոչ է
Ճշմարտապէս քրիստոնեայ՝ որ
ո՛չ համարձակի յայնմիկ կացու-
թեն մեռանիլ, յորում համար
ձակի կեալ : Ո՜հ թէ որքան
բազումք և զանազանք հերե-
տիկոսութիւնք եղեն կանխաւ ,
զորոց Ճառէ Հերօնիմոս · որք
ասէին զանձնիշխանութիւն այն
պէս գոլ , իբրութէ ո՛չ միշտ
կարօտիցիւր օգնականութեանն
այ · և այնքան մոլորին այնք ,
որք ընդ մանիքեոսի ասեն՝ ըզ-
մարդն ոչ կարել խորշիլ 'ի մե-
ղաց , որքան այնոքիկ , որք ընդ
իօվինեանոսի ասացին զմարդոյ
ո՛չ կարել մեղանչել , վն զի եր
կաքանչիւրն բառնայ զանձնիշ-
խանութին հոգւոյն : Իսկ մեք
ասեմք զմարդոյ՝ միշտ կարել
մեղանչել , և կարել ոչ մե-
ղանչել :

## Յաղագս Յուսոյ:

### Գլուխ Քսանևմէկերորդ:

Ո՛Ր ճշմարիտ և կատարեալ յոյսն է՝ առոյգ ակնկալու-թիւն հանդերձելոյ երանութեան, յառաջեկեալ 'ի շնորհացն Ա՟յ և յարդեանց նախընթացից: Այսոքիկ երկոքեանքս են հար-կաւորք առ ճշմարիտ յոյսն, վ՟ն զի շնորհն Ա՟յ 'ի ձեռն ար-դեանց պահպանի: Իսկ առանց արդեան և շնորհաց՝ ոչոք փրկի: Բայց յոյսն թարց արդեան, ո՛չ ասի յոյս՝ այլ յանդգնու-թիւն:

Նա ունի զճշմարիտ յոյս, որ թէպէտ յաճախաբար կրթէ զինքն 'ի գործս բարիս, սակայն ոչ երբէք 'ի յարդիւնս իւրս, այլ

այլ միայն 'ի վերառաստութիւն բարութե և առատաձեռնութե Ածայնոյ ապաստան լինել, ոչ գիտելով, արդեօք բարիք իւրք հաճոյք լինեն Այ, որովհետև համայնք արդարութիւնք մերք են իբրև զհանդերձս ապահա_րի: Նա ունի զճշմարիտ յոյս, որ մատուցանէ Այ զպատա_րագ արդարութե, ըստ այնմ, մատուցէք զպատարագ արդա_րութե, և յուսացարուք 'ի Տր: Պատարագ արդարութե է միածին որդին Այ, որ զինքն վն մեղաց բոլորի աշխարհի մատոյց հօր Այ 'ի վր սեղանոյ սրբոյ խաչին, մատուցանելով զառա_տագոյն վճարումն, քան զոր բո_լոր աշխարհս պարտիւր: Վան_զի բաւական էր (ոչ ասէ ամ_բրոսիոս) միակի կաթն այնքա_նոյ պատուականագունեղի ար_եան

եան առ 'ի փրկել զբոլոր ազգ-
մարդկայինս. բայց սակայն առա
տաբար էհեղ, ո՛չ զի ցուցա-
նիցէ զառատութի իւրոյ սիրե-
լութե. Յայսմիկ պատարագով
կայանայ բոլոր փրկութիւն և
յոյս մեր, ըստ այնմ բեռնար-
տոսի որ ասէ. Մեղայ մեղս
մեծամ, և խիղճ մնացս ամ-
բոխի. սակայն ո՛չ վրդովեսցի,
զի զվէրս տն վերայիշեցից,
իսկ ես որինչ ինձ պակասի,
ինձէն համարձակօրէն սեփա-
կանեմ ինձ. 'ի ներքսականաց
գթութեց տն. վն զի ողորմու
թիւն առատապէս հեղաւ, և
ծակքն ընդ որս արտահեղանի
չեն պակասք: Քանզի նա պահ
եաց, հսկեաց, և աղօթեաց,
քրտնեցաւ, վտանգեցաւ, ար-
տասուեաց, ձաղեցաւ, չարչարե
ցաւ, և խաչեցաւ, ո՛չ զի 'ի
նմին

նմին ունիցիմք զլրումն ամենից պակասութեանց։

Ու ճշմարիտ յոյս երանութեան պարտի ներածել զմեզ ի գերազանցագունեղ սէրն Յիսուսի Քրիստոսի, յորմէ ստիպեցեալ համդերձ այնքանեան դառնութեան նախարդիւնաւորեցաւ մեզ ըզփրկութիւն, և զի մի՛ գուցէ շահեցեալ փրկութիւնն վասն մեր կորնչիցիւր, արար զայնքան ըզգուշութիւն, մինչ զի եւս մեզ զհրեշտակս առ պաշտպանութիւն, զսուրբ գիրս առ ուսուցումն, զօրինակս իւր՝ և սրբոց իւրոց՝ առ ցուցումն ճանապարհի, զմարմին և զարիւն իւր առ զօրացուցումն։

Յայտյանդիմանութիւն ճշմարտի յուսոյ ունի նա, որ քաջապէս ընդդիմանայ չարեաց, և համազօրանայ ՚ի բարիս, որ քաջ

է

է՛ ՚ի բուռնարկանութեան դժուա֊րագունից, և հզօրեղ ՚ի յարա֊տևելն ՚ի նոսին. ըստ այնմ սաղ֊մոսի որ ասէ, քաջալերեցա֊րուք, և զօրասցին սիրտք ձեր, ամենեքեան որք յուսացեալ էք ՚ի Տէր:

Օյայտյանդիմանութիւն սորա յուսոյ ունի նա, որ զա̄ծ֊այնով պատուիրանաւ և զուխ֊տիւ անցանէ, ոչ հոգայ ուղղել զվարս իւր ըստ գրոց, կարի յոյժ յանդգնեալ թարց ար֊դեանց զբարութիւն Ա̄յ: Այս֊պիսի յոյսն է ընդունայն, որ̄պ ասի ՚ի գիրս իմաստութեան, յոյս ամբարշտի իբրև զփետրիկ որ ՚ի հողմոյ բառնի, և իբրև ըղ֊պղպջակ, որ ՚ի մրրկաց ցրուի, և իբրև զծուխ որ ՚ի հողմոց ցնդի, և իբրև զյիշատակ միոյ աւուր հիւրի անցաւորի:

# Յաղագս Երկիւղի:

## Գլուխ Քսաներկուերորդ:

Արդար երկիւղն է, հաճատալ, եւ վարուք մտադիր պահպանութի Ածայնոց պատուիրանաց: Դարձեալ. արդար երկիւղն՝ է՛ հոգունակութիւն սրտին քարշօղ զմարդն 'ի յապօրինաւորէ կիրառմանէ անդամոց, եւ զզայութեց արտաքնոց, եւ ախորժմանց ներքնայնոց, մի՛ գուցէ հոգին բոլորովին անջատիցի յ՜յ, կամ 'ի ընտանեկցութէ նորին, առժամանակ ինչ հեռանայցէ: Նաեւ զզուշանայ, մի՛ գուցէ միտն 'ի կերակուրս, եւ 'ի ըմպելիս, 'ի քունս, կամ յայլ իմն փոքրագոյն ստեղծուած խնդրիցէ զհեշտութի,

թի՜ , և այսպէս 'ի ջերմեռան_
դութէն Ա.Յ գաղջանայցէ :
Զայս հոգունակութիւն ունի
հարմն հոգևոր առ սիրելագու_
նեղ փեսայն յո՛, մի՛ գուցէ շարժ-
մամբ իւիք, կամ ընթացմամբ,
կամ բանիւ, և կամ գործով
վշտացուցանիցէ զնա, որով
առնա ապերախտ գտանիցի :
Դարձեալ, մի՛ գուցէ նուաղ
հաձելի երևիցի 'ի ձեռն իրիք
մեղի նաև փոքրագունի : Ար-
դար երկիւղն սուրբ է հրաժա_
րիլ՝ ոչ միայն 'ի մեղաց ծաներց,
այլ նաև 'ի մեղաց ներելեաց ·
քանզի 'ի սովորութէ ներելեաց
կորուսանի ապահովութիւն մտաց,
և ընտանեկցութիւն Ա.Յ, և
զանցառարեցեալ լինի բազմա_
զան շնորհ :

Առ արդար երկիւղն պարտի
ներածել զմեզ բազմազան

օգտակարութիւն նորին։ Քանզի է սկիզբն իմաստութեան։ Ուստի սաղմոսերգուն ասէ. Սկիզբն իմաստութեան երկիւղն Տ՟Ն. է և սկիզբն արդարութեան, ըստ այնմ Էկղէս, որ ասէ, որ Թարց երկիւղի է, ոչ կարէ արդարանալ. Դարձեալ. է կնիք և եզրափակումն ամենից առաքինութեանց՝ և շնորհաց, ըստ այնմ, երկիւղ տ՟ն 'ի համայնս զինքն վերադնէ. Ուր ո՞չ գտանի երկիւղ տ՟ն, իսկոյն բնաւք շնորհք ցրուին, և խիղճ մտացն Թիւրի, ըստ, Էկղէսիաստիկեայ, եթէ ոչ միշտ պահիցես զքեզ յերկիւղի տ՟ն, փութանակի կոր ծանեսցի տուն քո։ Զայլ օգտութ-ն երկիւղի տ՟ն առբերէ երանելին բեռնարդոս ասելով. 'ի Ճշմարտութեան ուսայ՝ ոչ ինչ գոլ ուղղապէս գործունեայ առ 'ի

ար-

արդիւնաւորել զշնորհ, քան
զայս, զի յնմին ժամանակի
առաջի Ա.Ն գտանիցիս՝ ոչ ըզ-
բարձր գիտել, այլ երկնչիլ:
Երանի մարդոյ՝ որ միշտ գտա-
նի երկնչօղ, երկիւր ուրեմն,
մինչ վերահաստանի շնորհ, եր-
կիւր, յորժամ հեռանայ. եր-
կիւր, մինչ կրկին վերադառնայ:
Նա՛ այս է միշտ երկնչօղ լինիլն,
մինչ մերձ է շնորհն, երկիւր մի՛
գուցէ անարժանապէս գործի-
ցես նովա՛: Երկիւր ՚ի բացբառ-
նիլն շնորհաց, իբրև իսկոյն ան-
կանելոց: Իսկ եթէ արդէն
շնորհն քա՛ջարար վերստին դար-
նայցէ, յայնժամ յոյժ առա-
՛ւել երկնչելի է, մի՛ գուցէ հան
դիպիցի կրել զկրկնանկումն: Ա.ռ-
նոյնն պարտի ներածել զմեզ
ողբալի անկումն հրեշտակաց,
զորմէ ասէ յօբ. ահա՛ասիկ

որք ծառայեն նմ չեն կայունք, և 'ի հրեշտակս իւրս եգիտ ըզ- թիւրութի, որ քան ես առա- ւել որք բնակեն 'ի տունս կա- ւեղէնս, և ունին զհիմն հող- ային, սպառեսցին իբրև 'ի ցե- ցոյ։ Դարձեալ. անկումն արանց սրբոց 'ի սկզբանէ աշխարհի, որպ եղև ադամ, սամփսոն, սողո- մոն, և համայնք առաքեալք. բայց աւա՜ղ արդենիս, որք որ բազունեղք կործանին, ըստ այնմ, անկցին 'ի կողմանէ քում- մէ հազարք, այս է, որք յա- ւուր դատաստանին պարտին նստել առ կողմն դատաւորին. և տասն հազարք յաջմէ քումմէ, այս է, որք պարտին կետեղիլ ընդաջմէ քոյ։ Ուստի ասէ մեկնիչն. են բազումք որք հա- մարին զինքեանս դասելոց ընդ- քոյ, և են յոյժ բազումք, որք հա-

համարին զինքեանս զետեղելիս ընդաջմէ քո՛ւ 'ի մէջ փրկելեացն , բայց խաբին , վ՟ն զի որք զինքեանց վստահին , ոչ ունելով յայլում զարմատ հիմնեցեալ՝ անկանին 'ի խորհրդոց

իւրեանց ։

Ու նոյնն պարտին ներածել զմեզ օրինակք սրբոց երկնչողայն յ՟յ , ո՟պ յօբ ասաց զինքենէ , իբրև ուսուցեալ ալիք 'ի վ՟ն իմ , միշտ երկեայ յ՟յ ։ Նա՛ 'ի վ՟ն այնր յոբայ , 'ի խորագունեղն գժոխոց իջուցանիցեն ընա՛ք իմայինք , ասէ մեկնիչն ։ Մտածեցէք թէ ո՞վ 'ի ձէնջ ապահով իցէ զհանգստենէ , մինչ յայնմանէ զարհուրի նա , զոր դատաւորն գոլէ ։ Ուստի Հերոնիմոս զիւրմէ ինքենէ խօսի ։ Որքանիցս մտածեմ զօր դատաստանին ,

թոլորով մարմնով դողացեալ
սարսափիմ ։ Ապա զինչ մեք
ողորմելիքս առնելոցք եմք, ուր
այնքան արք ազնիւք և սուրբք
դողան ։

Օյայտյանդիմանութեն արդար
▪ երկիւղի ունին, որք այն_
քան հոգւունակք են 'ի համայնս
յայնոսիկ որք են Ա.Տ, մինչ զի
յոչխմիք ժամանակի, կամ տեղ_
ւոջ զմնացառնեն զո՛ և իցէ_
այնցի, որք կարելիք են առ ին_
քեանս, մանաւանդ որքան կա_
րեն գործեն զհամայնս ջերմա_
թար ։ Ուստի սաի էկլէսիաստի_
կեայ ։ Որ երկնչի յա̃յ, զոչինչ
զանցառնէ ։ Եւ դարձեալ ․ որ
երկնչի յա̃յ՝ արասցէ զբարիս ։

Օյայտյանդիմանութեն անար_
▪ դար երկիւղին ունին նո_
քին, որք ո՛չ վ̃ն Ա.Տ, այլ զի մի̃
կորուսցեն զմարմին կամ զիրս
մարմ

մարմնաւո՛րս՝ առնեն զբարիս , կամ թողուն զչարս , և կամ զի մի՛ վնասիցեն 'ի մարմնի , և կամ յիրում , առնեն զչարն՝ և թողուն զբարին : Զայսպիսի երկիւղն արգելու տէրն ասելով , մի՛ երկնչիցիք յայնցանէ , որք սպանանեն զմարմին :

Ա՛ս եսայեայ : Դու ո՞վ ես զի երկնչիցիս 'ի մարդոյ մահկանացուէ : Ընպիսեաց ասէ տէր · ուր են Ածք նոցին , յորս յուսացեալք էին :

## Յաղագս Խնդութեան :

### Դուռն Քառասներեքերորդ :

Ճշմարիտ ուրախութիւն կամ խնդութիւն է մխիթարիլ 'ի յայնս որք են 'ի յԱծ · քանզի նիւթ ամի խնդուէ է 'ի յԱծ · Ապ · կա-

կարողութ̃ի, իմաստութ̃ի բարու-
թ̃ի, առատաձեռնութ̃ի, գե-
ղեցկութ̃ի, երանութ̃ի, ողոր-
մութ̃ի, արդարութ̃ի, ճշմար-
տութ̃ի, ազնուութ̃ի, սրբութի,
հանդարտութ̃ի, հաւատարմու-
թ̃ի, սէր, քաղցրութ̃ի, և նմանք
սոցին։ Նա՛ այսոքիկ ամենեքեան
անչափք, և յաւիտենականք են
'ի յա̃ծ ։ Նա ունի զճշմարիտ
խնդութ̃ի, որ ունի զանկեղծ
խիղճմտաց 'ի յա̃մն գործս իւրս,
և ոչ երբէք անցանէ զպատ-
ուիրանօք, և զուխտիւք Ա̃ծայ-
նոց․ այլ միշտ դիտէ զարդա-
նալ, և համակերպել զինքն
օրինակացն ք̃սի, և վարուց Ա̃ծ-
այնոց։ Օ այսպիսւոյ խղճմտաց
խնդայր և պարծէր առաքեալն
ասելով ։ Փառք մեր այս է,
վկայութ̃ի խղճմտաց մերոց՝
որ 'ի պարզութ̃ե, և յանկեղ-
ծու-

ծութե՟ Ա՟յ, ոչ յիմաստութե՟ մարմնականի, այլ՝ ի շնորհէն ո՟յ կենցաղավարեցաք յայսմիկ աշխարհի, բայց առատագոյն առ ձեզ ։

Աւ ճշմարիտ խնդութի՟ն պարտի ներածել զմեզ այս, զի ամենաբարին Ա՟ծ ՝ի մէջ ամենից ստեղծուածոց միայն զմարդկային ստեղծուածն այնքան միաւորեաց ընդ ինքեան, մինչ զի ճշմարտապէս ասիցի, Ա՟ծ զոլ մարդ, և մարդն զոլ Ա՟ծ, և զոր ինչ ունի Ա՟ծ ՝ի ձեռն բնութե՟, մարդն ունի ՝ի ձեռն շնորհաց, քան զի ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն աբրահամու ։ ո՛չ ասէ առաքեալն ։ ուր մեկնէ ոսկեբերանն ասելով ։ Ճշմարտապէս է մեծ, և զարմանալի նստիլն մարմնոյ մերոյ ՝ի

'ի վեր․ և երկրպագիլ 'ի հրեշտակաց, և 'ի հրեշտակապետաց։ Գոյ և այլ ինչ ներածողական խնդութե, որէ այս, զի Ած ստուգեաց մեզ զյաւիտենականէ երանութէ խոստմամբ օրինաց, և երդմամբ մարգարէից, ըստ այնմ, երդումն զոր երդուաւ աբրահամու հօր մերոյ տալոց մեզ զինքն, 'ի ձեռն հրովարտակաց չորից աւետարանչաց, 'ի ձեռն վկայութե առաքելոց, և աւետարանչաց, 'ի ձեռն առհաւատչէի ոգւոյն սրբոյ 'ի մկրտութե, որ է առհաւատչեայ մերոյ երանութե, 'ի ձեռն նախաճաշակման 'ի ջերմեռանդութե, և 'ի քաղցրութենն Այ, և 'ի ձեռն պատանդի որ է քս միածին որդին այ։ Առայս երկեակ ուրախութիւն յորդորէ զմեզ առաքեալն ասելով,

լով, ուրախ լերուք 'ի տ͞ր համա
պազ՝ վ͞ս Ս. ծայնոյ միաւորութե .
Դարձեալ ասեմ ուրախ լերուք՝
վ͞ս ստուգութե յաւիտենակա-
նի երանութե:

Օյայտյանդիմանութիւն , և
զնիւթ ճշմարտի ուրախու-
թե ունի նա՛ որ 'ի ձեռն ներք-
նայնոյ ներշնչման եղեալ ստոյգ-
զթողութենէ ամենից մեղաց ,
Ուստի ասէ գրիգոր, խոկական կեանն է յո̃մէ մնաց զսէրն ա̃յ, և ընկերին վերապահել. 'ի յարտաքնոց գործողութեանց հանդարտիլ, միայն 'ի փափաքմունս կերտողին առ յենուլ. ո̃չ զի զոչինչ արդէն երագործել ճահաճորեցի, այլ սոնակոխ արարեալ զա̃մն հոգս՝ առ 'ի տեսանել զերեսս ստեղծողին իւրոյ, սիրոն բորբոքեցի այնպէս՝ զի արդէն ծանիցէ զապականացու բեռն մարմնոյն հանդերձ տրտմութե̃ տանիլ, և համայնիւք ցանկութեամբք բաղձալ՝ ներալինիլ 'ի յայնս օրհնաբանութի̃ս դասուց հրեշտակաց, առ 'ի խառնիլ ընդ երկնայինս քաղաքացիս, և խնդալ առաջի Ա̃յ զյաւիտենականէ անապականութենէ:

Օյայտյանդիմանութիւն ստոյ-խոկման ունի նա, որ զիր

ինչ

ինչ զծ՟յ , կամ զիմեքէ կատա_
րելութէ նորին Ճանաչէ , որում
Ճշմարտութի սրբազանի դրոյն
ներհականայ , և սակայն զայս
'ի ձեռն բանից յանդգնաբար
ջատագովէ ։ Յայսմանէ 'ի վաղն_
ջուց հերետիկոսութիք յառա_
ջացան , ՟թ , արիոսի , որ ուրա_
ցաւ զորդին գոլ համայաւիտե_
նականակից , և համագոյակից
հօր ։ Նաև սաբէլի , որ զանձինս
'ի յերրորդութեան չփոթեաց ,
դնելով զանուանական տարբե_
րութի միայն , մինչ ճշմարտա_
պէս տարբերին յատկութիք ։
Քանզի Հայր յատկապէս ունի
զանծնելութի , որդին յատկա_
պէս զծնելութի , իսկ ոգին սբ
զբղխելութի ։

## Յաղագս Ընտրողութեան :

### Գլուխ Երեսուն եւ չորրորդ :

Ո՛Ր մարիտ ընտրողութիւնն է՝ խոհեմաբար ենթադատել 'ի մէջ ստեղծողին, և ստեղծուածոյն, թէ զինչ իցէ ստեղծողն, և զինչ ստեղծուածն : Նա՛ և դարձեալ տրամադատել թէ զինչ իցէ բարին, զինչ բարեգոյնն, և զինչ բարեգունեղն· զինչ չարն, զինչ չարագոյնն, և զինչ չարագունեղն· որքան փափաքելի իցէ բարին, և որքան խոտելի իցէ չարն : Դարձեալ, թէ մարդ զորքան յարգունի պարտ իցէ ընծայել վերնագունին իւրոյ, և զորքան գթութի և զցաւակցութի վայրագունին, զորպիսի ընկերակցու

ցու

ցութին հաւատարին, որպիսաբար պարտիցի ունիլ զինքն առ մեռեալս, որպիսաբար առ կենդանիս, որպիսաբար առ նախընթացօղս, որպիսաբար առ յաջորդօղս, որպիսաբար առ բարեկամս՝ զի սիրեցին 'ի յոյժ. որպիսաբար առ թշնամիս՝ զի սիրեցին յաղագս Ա.Յ. որպիսաբար ունիլ զինքն առաջի Ա.Յ ծածկապէս, որպիսաբար առաջի մարդկանց յայտնապէս. որ կերակուր տալի իւէ մարմնոյ, և որ ոգւոյն. որով զգեստուք զգեստաւորելի, երբ ուտելի, երբ ըմպելի, երբ պառկելի. և զորքան, և յորոց կերակրոց: Երբ հսկելի. երբ ննջելի. որքան, և զորքան ժամանակ. երբ աղօթելի. երբ ողբալի. երբ զինքն խրատկութին առնելի, որպիսաբար զինքն ունելի

լի

լի առողջութիւն․ ո՞րպիսաբար առ պարսաւանս․ ե՞րբ խօսելի, երբ լռելի, ո՞րքան, և զո՞րոց պատճառաց․ ընդ որո՞ց, յո՞րում տեղւոջ, և յորու՞մ ժամանակի․ երբ առնլի, ե՞րբ վերապահելի, ե՞րբ տալի, և ո՞րքան, և որո՞ց, և յորու՞մ ժամանակի։

Օայսցանէ ամենեցունց կարգաւորապէս և խոհեմաբար տրամադատելն՝ է ճշմարիտ ընտրողութիւն, Առաքինութիւն այս՝ է վարդապետն ամենից առաքինութեանց․ կացուցանօղ ամենից զեղանակ և զկարգ։ Ուստի ուր ընտրողութիւն ոչ է, անդ՝ սէրն ոչ պահէ զկարգ, թէ զինչ յառաջագոյն, և զինչ յետնագոյն իցէ սիրելի․ ոչ և զեղանակն ճանաչէ թէ զինչ է այն որ նուազ, և զինչ է այն որ առաւել

իցէ

լցէ օկրելի ։ Նաև ոչ անդէն՝ ուր ոչ է ընտրողութիւն պաշտպանի կարգ, ըստ վկայութեան օգոստինոսի որ ասէ, ուր կարի սաստիկ պաշտպանի խոնարհութիւն, բեկանի կառավարչի հեղինակութիւն ։ Անդ՝ ուր ոչ է ընտրողութիւն՝ հնազանդութիւնն է կոյր, և յիմար, մինչ նաև 'ի չարս համարի հնազանդելի գոլ ։ Անդ՝ ուր ոչ է ընտրողութիւն նաև առատաբաշխութիւն կարի սաստկապէս արտահեղու զինքն՝ մինչ առանց հարկաւորութեան տրի դերասանաց ։ Անդ՝ ուր ոչ է ընտրողութիւն, երկիւղն անկանի 'ի յուսահատութիւն, և յոյսն փոխարկի 'ի յանդգնութիւն ։ Անդ՝ ուր ոչ է ընտրողութիւն, արդարութիւն ցուցանէ զկարի առաւել խստութիւն. իսկ համբերութիւն, ողորմածութիւն, հեզութիւն,

թին, քաղցրաբարոյութին, և բարութին, զանխռաւման կեղծեն: Ընդ՝ ուր ոչ է ընտրողութի, կրօնն տարապարուծանի, ճշմարտութին սուտ, ողջախոհութին ապականի, ծանրութին թեթևանայ, կայունութին ընդփոփոխի: Ընտրողութե առաքինութիս այս 'ի պակասութե այլոց առաքինութեց անձի:

Քանզի որովհետև մարդն բազմիցս անկանի 'ի խոնարհութե 'ի հպարտութի, կամ 'ի մեծափառութի, 'ի սիրոյ 'ի նախանձ, 'ի համբերութե 'ի բարկութի, 'ի հեզութե 'ի յախտակալութիւն, 'ի ջերմեռանդութե 'ի գաղջութի, 'ի յողջախոհութե 'ի մարմնական ցանկութիւն, 'ի սիրոյ աղքատութե 'ի յագահութի, 'ի խաղաղութե 'ի խռովութի, 'ի միաբանութե 'ի տարաձայնութի,

թ̃ի, 'ի հնազանդութ̃է յապս_
տամբութիւն, 'ի ծանրակացու_
թ̃է 'ի թեթևութ̃ի, 'ի կրօնէ 'ի
տարալուծութ̃ի, 'ի լռութ̃է 'ի
լեզուագարութ̃ի, կամ 'ի բամ_
բասանս, 'ի սիրոյ հոգեկանէ 'ի
մարմնականն, 'ի յուսոյ 'ի յան_
դգնութ̃ի, 'ի յարդար երկիւղէ,
'ի մարդկայինն, և 'ի ծառայա_
կանն, 'ի յարդարութ̃է 'ի խս_
տութ̃ի, 'ի յողորմածութ̃է 'ի
հեշտասիրութ̃ի, 'ի հաստատու_
թ̃է 'ի յանկայունութ̃ի, 'ի ճշմար
տութ̃է 'ի ստութիւն՝ յայնժամ
հուպ ընդ հուպ եղանի զգու_
շագոյն առ 'ի խորշիլ, և հոգա_
ցողագոյն, և 'ի համայնս ըն_
տրողագոյն։

Առ ճշմարիտ ընտրողութիւնն
պարտի ներածել զմեզ, և
կարէ հանապազորդական ըն_
թերցուածս, և մտածուածս գրուա_
ծոյ

ծոց սրբոց , շարունակական հետազօտութեամբ օրինակաց սրբոց , յաճախակի խորհրդածութիւն ընդ արանց խոհեմից . ըստ այնմ՝ Խնդրեա՛ յիմաստնոյն զխորհուրդ ։ Ուստի Տ՟ըն ասաց պօղոսի մո՛ւտ ՚ի քաղաքն , և անդ ասասցի քեզ թէ զինչ պիտոյ իցէ քեզ առնել ։ Նմանապէս առաքեաց զբորոտսն՝ ասելով ։ Երթա՛յք ցուցէք զանձինս ձեր քահանայից , ո՛չ միայն միում , այլ բազմաց , զի եթէ մի՛ոն իցէ նուազ ընտրող՝ միւսն գտանիցի ընտրողականագոյն ։

Այայտյանդիմանութ՟ի ճշմարտի ընտրողութեան ունի նա , որ զընա՛ւս գործս իւր իրակէ հանդերձ խորհրդով խոհեմից , զորս եթէ միշտ ոչ կարիցէ ունել՝ զիւրաքանչիւրս գործս և զիրողութիւս իւրս , առաջի Ն՟Տ

ներ-

նէր խղճիմտաց իւրոց համդերձ
ճշմարտի՛ւ ընտրողութ՟բ, և հա-
սունի՛ւ բացորոշութեամբ տրա-
մաբանէ, ըստ այնմ, առանց
խորհրդածութե՟ն մի՛ ինչ առնի-
ցես, և յետ առնելոյդ՝ ոչ ապա-
շաւեսցես: Ոչ սակայն յայսմիկ
միշտ հաւատասցէ խղճի մտաց
իւրոց, եթէ ոչ ունիցի զյայտ-
նագոյն վկայութի՟ն 'ի սրբազա-
նից գրոց, և ոչ զսրբազան գիրն
յեղաշրջիցէ կերպի՛ւ իւիք ըստ
յօժարութե՟ն զգացմանց իւրոց,
այլ համակերպիցէ զզգացումն
իւր սրբազանի գրոյ:

Օյայտայանդիմանութի՟ն անըն-
տրողութեան ունի նա, որ
պահօք, հսկմամբ, աղօթիւք,
ծաղանօք, և արտասուօք 'ի վեր
քան զզօրութիւնս իւրս ճգնի
տկարացուցանելով զինքն 'ի սա-
կաւուս ժամանակի, ո՟չ զի 'ի

բազումս ամս լինիցի անօգուտ 'ի ծառայութենն Ք.Ի· բայց ո՛չ, թէ որքան սակաւք մարդիք գտանին այժմուս ժամանակի, որք 'ի յայսպիսիս անդրանցանեն:

Օյայտյանդիմանութիւն սորա ընտրողութե ունի նա, որ կամելով խորշիլ 'ի տկարութէ մարմնոյ իւրոյ, զոչինչ զանցառնէ զայնոքիւք, որք են առհանդորրութի մարմնոյն, ասելով մն· զզօրութի իմ՛ առքեզ պահեցից, և հոգին մինչ յայնմիկ միջոցի իցէ թարց հոգևորի կերակրոյ, պակասի, և հաշի, որ թարց աշխատանաց ոչ երբէք ստանիլ կարէ: Ասորի ասէ օգոստինոս, մինչ երկնչիմք 'ի տկարութէ մարմնոյ մերոյ, զանցառնեմք զկեցութէ հոգւոյ: Քանզի մարմինն եթէ փափկասցէ անուցանիցի սպանանէ

զհո-

զՀոգին, ըստ նոյն օգոստինոսի, որ ասէ․ որպէս ցեցն ուտէ զբրդեղէնս, և հուրն կիզէ զփայտս, զխոտս, և զեղէգս՝ այդպէս փափկասուն մարմինն հրդեհէ զհոգին, և ծախէ։

Անապխսին ոչ խոկայ թէ վերջապէս մարմինն եղծանի՝ թէև ամի հանդորրութբ զմայլեցի, ոչ աշխարհականք զնմ փափկութի մարմնոյ 'ի գործածելով ոչ առաւել ծառայեն ԱՅ, այլ յաձախակի հիւանդանան։

Աւստի լաւագոյն է կենսունակ ոգին լի՛ շնորհօք գոլ 'ի մարմնոջ հիւանդի, քան ոգի հիւանդ կամ մեռեալ՝ լինիլ 'ի մարմնոջ առողջի։

## Յաղագս Ուրախակցութեան։

### Գլուխ Երեսունհինգերորդ։

Ո՛Ր մարթ ուրախակցութիւն ածած է, ուրախակից լինել Աստուծոյ յամենայն երանութեան, և կատարելութեան ընդհանրեցելոյ նմին յաւիտենականաբար, այսինքն, ուրախանալ զամենակարողութեան, զիմաստութեան, զբարութեան, և այլն։ Եւ թէ ոչ իմիք կարօտի, այլ զի ինքն ինքեան է բաւական, և ամենից ստեղծուածոց։

Դարձեալ, ուրախակից լինել Աստուծոյ, զկարգաւորմանէ երկնի, և երկրի, և ամենից որք են ՚ի նոսին, և զգործոց իւրոց մինչև ՚ի կատարած աշխարհիս․ մանաւանդ զգործոց ներմարմնութեան

թե՛ նորին , և թլփատութե՛ ,
չարչարանաց , յարութե՛ , համ_
բարձման , և առաքման ոգւոյն
սրբոյ , և զամենից դատաստա_
նաց յայտնեաց , և գաղտնեաց ,
շուրջ զդիւօք , շուրջ զհոգւովք
'ի դժոխս , 'ի լիմպոսի , 'ի քաւա_
րանի . և շուրջ զչարօք մարդ_
կամբք յաշխարհիս : Դարձեալ .
ուրախակից լինիլ Տ. Յ. զամենից
գովութե՛ց , և յարգութեանց
զորս ունի 'ի հրեշտակաց , և 'ի
սրբոց 'ի յերկնի , և 'ի մարդկանց
'ի յերկրի :

Դարձեալ . Ճշմարիտ ուրախակ
ցութի՛ն առմերձաւորս է , ուրա
խակից լինիլ իւրաքանչիւրոց
հրեշտակաց և սրբոց զփառաց
նոցին 'ի յերկինս : Դարձեալ ,
ուրախակից լինիլ մեղաւորաց
զդարձմանն , արդարոց զհամա_
զօրացմանն և զպահմանն շնոր_

հաց , եկեղեցւոյ՝ զօրբագնու_
թեանց, և զպարգևաց ոգւոյն
սրբոյ ։ Նա՛ ուրախակից լինիլ
ամենից սրբոց մարդկանց յեկե
ղեցւոջ, և՚ի յերկրի․ ք՟, երա_
նուհւոյ կուսին մարիամու, նա_
խահարց, մարգարէից, առաքե_
լոց, և իւրաքանչիւրոց ընտրելոց
զամենից պարգևաց ընդունե_
ցելոց և զիւրաքանչիւրոց ընդու_
նելեաց յ՟այ ։

Ու. Ճշմարիտ ուրախակցութի
պարտի ներածել զմեզ մե_
ծագունեղ օգտութին որ յա_
ռաջանայ՚ի նմանէ ։ Վասնզի զոր
ինչ ամենակարօղն Ա՟ծ բնակա_
նաբար ունի յինքեան, զկատա_
րելութի՟, զբարութի՟, և զերա_
նութի՟ , և զոր ինչ հրեշտակք
և ս՟ք ՚ի յերկինս զփառաց , և
զոր ինչ եկեղեցի զշնորհաց , և
զառաքինուեց, և զոր ինչ հա_
ճա_

հաստացեալքն ունին 'ի նմին, այսոքիկ ամենեքեան լինին յատուկք իւրաքանչիւրում ումեք 'ի ձեռն ուրախակցութեան։ Ք.ոնոյնն պարտի ներածել զմեզ թէ ուրախակցութիւնն հօր՝ և որդւոյ, և ոգւոյն սրբոյ է ծագումն ամենից շնորհաց, և եղև միշտ, նաև է այժմ սկիզբն ամենից գործոց Ք.ծայնոց։

Ո յայտյանդիմանութի ճշմարտի ուրախակցութեան ունի նա, որ 'ի ձեռն համայնից բերկրի 'ի համայնս՝ որք են 'ի յոծ, որում կարգաւորութի եկեղեցւոյ՝ և համայնք գործք Ք.Յ̃, և դատաստանք, և վարք Ք.Ծ̃այինք, և սրբադունեղք օրինակք տն̃ մերոյ Յ̃ի Ք̃ի, և ամենից բարեկամաց կարի յոյժ հաճելիք են, և զայսոսիկ զամենեսեան դրոշմատէ բանիւք, նաև

այլոց բացայայտէ։ Պարծեալ.
'ի սրտի այնպիսւոյն ծնանի ու-
րախութի հոգևոր զիւրաքանչ-
իւրոց պարգևաց բնականաց
հոգևորաց, և հաճոյականաց
հրեշտակաց, և սրբոց՝ որք են 'ի
յերկինս, և իւրաքանչիւրոց
մարդկանց՝ որք են 'ի յերկրի, և
առ այսոսիկ ամենեսեան միշտ և
յամենուրեք գործակից լինի, որ-
քան կարէ։

Օյայտյանդիմանութիւն սորա
ուրախակցութե ունի նա,
որ զամ կարգաւորութի ածային
'ի յերկինս, և 'ի յերկրի, և ըզ-
գործս արդարոց, և զառաքինու-
թիս, և զոր փառս նոցին դրօշա-
տէ բերանով, բայց զամենայն սր-
տիւ պարսաւէ։ Նյապխեաց
նախատինս տայ տր 'ի ձեռն եսայ-
եայ ասելով։ Ողորմութս այս
շրթամբ պատուէ զիս, բայց սիրտ
իւր-

իւրեանց հեռացեալ է յինէն ։
Աստի այսպիսիքն հատեցեալքն
՚ի մարմնոյ եկեղեցւոյն, որք բա-
րեաց մարմնոյն ոչ հաղորդին ։

## Յաղագս Ապաշխարութեան ։

### Գլուխ Երեսուն և վեցերորդ ։

Ճշմարիտ և կատարեալ
ապաշխարութիւն է ապա-
հովութիւն մեղաց, թէ ամենա-
կարօղ և հաւատարիմն Ած ոչ
երբէք զխուրս բարեկամն բացա-
թողու, ըստ Սիրաքայ որ ասէ.
Ով յուսացաւ ՚ի տր և յամօթ
եղև, ընդմնաց ՚ի պատուիրանս
նորին՝ և բացաթողեցեալ եղև ։
Նա ունի զճշմարիտ ապաշխա-
րութիւն, որ է ստոյգ, թէ բարի
Ածն միշտ ներկայ է ՚ի վշտաց-
նութիւնս իւրս, և միշտ է պատ-
րաստ

րաստ զի զնոսին 'ի փորձութեց
զերծուցանիցէ, և զերծուցեալ
փառաւորիցէ. ըստ այնմ՝ սաղ-
մոսի որ ասէ, առ նմ եղէց 'ի
նեղութե. փրկեցից զնա, և փառ
աւոր արարից զնա։ Եւ այսպէս
եղև ընդ դանիէլի 'ի գուբն
առիւծուց, և ընդ նոյի 'ի տա-
պանին, և ընդ յովսեփայ 'ի ջր-
հորոջ, և ընդ երից մանկանցն
'ի հնոցի հրոյն, և զայսոսիկ զա
մենեսեան քաղցրագունեղապէս
զերծոյց։ Ուստի ասէ երանելին
պետրոս, գիտէ տ̃ր զա̃ծապաշտս
փրկել 'ի փորձութեց։ Եւ 'ի
գիրս տօբիթայ, ասէ սառա.
զայս հաւատացապէս ունի ա̃մ
ոք, որ պաշտէ զքեզ, զի կեանք
նորին եթէ 'ի փորձութե եղիցի
պսակեսցի, իսկ եթէ 'ի նեղու-
թե գտանիցի, ազատեսցի, և
եթէ 'ի յապականութե լիցի առ

ողոր-

ողորմածութի՛ն քո գալ ձմհա_
հորեսցի ։ Զի ո՛չ բերկրիս ՚ի
կորուստս մեր՝ վ՟ն զի զկնի մրր
կաց զհանդարտութի՛ն առնես,
և զկնի արտասուա՛ց և ողբոց
զցնծութի՛ն ներհեղուս ։ Սա ունի
զճշմարիտ ապաշխարութի՛, որ ո՛չ
երկբայի լսելի լինիլ ամենից ա_
ղաչանաց, և արդար բաղձանաց
իւրոց ։ Զի ասէ ոսկէբերանն,
եթէ հանդերձ այսու ջանի՛ւ
մտացդ մատչիցիս՝ և ասիցես,
եթէ ո՛չ առից ոչ հեռացայց,
վերջապէս առցես ․ բայց եթէ
զայնպիսիս խնդրիցես, զորս
տալ վայել է նմա, յորմէ
խնդրի, և քեզ որ աղաչեսդ
օգտակար իցէ առնուլն ։ Առա_
քինութիւնս այս՝ է կարի յոյժ
գովելի, և մեծապէս ար_
դիւնաւոր առաջի Այ, զորմէ
յորդորէ առաքեալն (Եբրայեց․

10։

10։ 35։ ) ասելով։ Արդ՝ մի՛ մերժէք ՚ի ձէնջ զապաւինութիւն ձեր յորում կայ մեծաց վարձուց հատուցումն։

Առ ճշմարիտ ապաւինութիւն պարտի ներածել զմեզ այս, զի ամենառատն Ած̅ բազմիցս առանց մերոց փափաքմանց տայ մեզ զառաւել մեծագոյնս ՚ի յիւր մէ սոսկ անըմբռնելւոյ բարուէ, քան զոր համարձակիմք փափաքել։ Քանզի ստեղծ զմեզ հայրն ՚ի պատկեր երրորդութեան, և սրբագունեց որդի նորին եւ մեզ զմարմին իւր ՚ի կերակուր, և զարիւն իւր ՚ի ըմպելի, և զհոգի իւր ՚ի գին փրկութեան մերոյ։ Արդ՝ ո՞վ ոք երբէք համարձակիցիւր միայն միանգամ խոկալ զայսպիսեաց։ Առնոյնն պարտի ներածել զմեզ զետեղումն ք̅ի ՚ի վ̅ր խաչին։ Ուստի զայսմանէ ասէ

ասէ բեռնարտոս՝ թէ ո՞վ ոք ոչ
յափշտակիցիւր առ յոյսն և առ
'ի ընկալնուլ զապաւինութիւն,
եթէ ուշադրիցէր զգետեղումն
մարմնոյն ք̅ի 'ի վ̅ր խաչին: Տես
զգլուխն կորացեալ առ 'ի համ-
բուրել, զբազուկսն տարածե-
ցեալ առ 'ի գրկել, զձեռսն ծա
կեցեալ առ 'ի առատաբաշխել,
զկողն բացեալ առ 'ի սիրել, և
զտարածումն բոլորի մարմնոյ
առ 'ի զինքն բոլոր վատնել:

Ծայրայանդգնութի ճշմար-
տի ապաւինութե ունի նա,
որ ո՛չ ունելով զմեղս մահացուս
'ի խղճմտանս իւրս ոչ խածանի
վասն մեղաց մահացուաց, ըստ
վկայութեան յոհաննու որ ասէ:
Եթէ սիրտ մեր ոչ յանդիմա-
նեսցէ զմեզ, ունիմք զապաւի-
նութի առ ա̅ծ, և զոր ինչ խնդ-
րիցեմք առնուցումք 'ի նմանէ:

Աս-

Սուտի ընթեռնանի զշուշանայ, թէ էր սիրտ նմ ունող զապա-ւինութին ՚ի տմ, զի անմեղ Ճա-նաչեաց զինքն զյանցանաց առա-

դրեցելոց:

Ոյլ յայտյանդիմանութի Ճշ-մարտի ապաւինութեան ունի նա, որ շարունակաբար կրթէ զինքն ՚ի գործս բարիս, և մանաւանդ ՚ի հոգևորս ողորմութիս, որ է թողուլ զանիրաւութիս, և առ-նել զմ այլոց զաղօթս, զորմ-ասի ՚ի գիրս տօբիթայ, ողոր-մութին յամենից մեղաց և ՚ի մահուանէ փրկէ, և ոչ թոյլ տայ հոգւոյ գնալ ՚ի խաւարս: Բանզի ողորմածութին ապա-ւինութիւն մեծ եղիցի առաջի Ն՚Տ բարձրելոյն՝ ամենից այնո-

ցիկ՝ որք առնեն զնա:

Ոյլ իմն յայտյանդիմանութի Ճշմարտի ապաւինութե ըղ-

թո-

թողութե՟ մեղաց ունի նա, որ յերկրպագութեան և 'ի յառողջութե՟ իւրում տայ զինքն ճշմարտի ապաշխարութե՟ վ՟ն մեղաց, ըստ վկայութե՟ օգոստինոսի որ ասէ, եթէ ոք կացուցեալ 'ի վերջնում հարկաւորուե՟ հիւանդութե՟ իւրոյ կամիցի ընկալնուլ զապաշխարութի՟, և ընկալնուցու, և առժամայն խոստովանեսցի և 'ի կենաց աստի ելցէ, արդարև ասեմ ձեզ, ո՛չ բացասեմք նմ՟ զայն զոր խնդրէ, վ՟ զի բարեպէս աստի կենաց ելանէ. սակայն ոչ վստահանամք. բարեկեաց հաւատացեալն աներկեան աստի կենաց ելանէ։ Առնօղն զապաշխարութի՟ և զխոստովանութի՟ մինչ առողջ է, և հետևապէս բարեպէս կեցօղն, աներկեան աստի կենաց ելանէ։

Ունօղն զապաշխարութիւն 'ի վերջնումն, և խոստովանեալն աներկեւան աստի կենաց ելանէ. ես ո՛չ եմ աներկեւան ։ Ո՛չ թէ ասեմ դատապարտեսցի, ո՛չ ասեմ. այլ ասեմ նաև ազատեսցի. կամի՞ս ազատել զքեզ 'ի յերկբայութենէ, կամի՞ս զերծանիլ յանստուգութենէ, ապաշխարեա՛ մինչ առողջ ես. վ՟ զի եթէ առնիցես զճշմարիտ ապաշխարութի՟ մինչ առողջ ես, և յետին օրն գտանիցէ զքեզ, փութա՛ զի խոստովանիցիս. եթէ այսպէս առնիցես՝ լինիս աներկեւան. վ՟ է՞ր աներկեւան, վ՟ զի յայնմիկ ժամանակի ապաշխարեցեր՝ յորում և մեղանչել կարացեր ։

Իսկ եթէ կամիցիս ապաշխարել յայնժամ, յորժամ մեղանչել ո՛չ կարես, մեղքն զքեզ թողին,

զին, և ոչ զուր զմեզս ։ Ուրեմն
կալ զատոյգն, և 'ի բաց թող
զանստոյգն։ Որք կամին ընդու-
նել զՃշմարիտ ապաշխարութի.
պիտոյ է զի համափոխիցեն ըզ-
յուժգնութիւնս իւրեանց ստա-
գործս հոգւորս, ըծ՛, որ ասի։
Եսայեայ 40։ Որք ապաւինելին
'ի տէր, փոխեսցեն զզօրու-
թի՛ն, առցեն զթևս իբրև զար-
ծուեոյ, և այլն։ Ով զի որք յա-
ռաջագոյն զօրեղք էին առ աշ-
խարհս մարմնաւորս, յետոյ
ևս լինիցին զօրեղք առ աշխա-
տանս հոգևորս։

Օյպտյանդխմանութի՛ն անա-
պաշխարութե՛ ունի նա, որ
խոտելով զշնորհ փրկութե՛, գի-
տութ՛ն անկեալ գնի 'ի մեղս,
ուստի ասի յաւետարանի, գի-
տեմք զի Ա՛ծ մեղաւորաց ոչ
լսէ ։ Յոհ. 9։ Իսկ եթէ Ա՛ծ-

ապաշտ ոք իցէ, նմա լսէ ։ Եւ 'ի սաղմոսին, եթէ տեսի զմեղս 'ի սրտի իմում, ոչ լուիցէ ինձ Տէր ։ Եւ Եսայի ասէ, անօրէնութիւնք ձեր որոշեցին 'ի մէջ ձեր եւ Այ՟ ձերում, եւ թագուցին զերեսս Այ՟ 'ի ձէնջ ։

Օ յայտոյանդիմանութի սաոյ ապաւինութեն ունի նա, որ համարի զարդարադունեղն Այ՟ այնպէս յաղթել 'ի յողորմածութէ եւ 'ի գթութէ, մինչ զի այնքան զբարիս՝ որքան զչարս փրկիցէ 'ի յաւուր դատաստանի, այնու զի վ՟ ամենեցունց մեռաւ ։ Ընդդէմ այսմ ասաց Տէրն երթիցեն նք՟ 'ի տանջանս յաւիտենականս, իսկ արդարքն 'ի կեանս յաւիտենականս ։

Օ յայտոյանդիմանութիւն սաոյ ապաւինութեն ունի նա, որ համարի զմեղաւորն կարել արդիւ-

դիւնաւորիլ. զառաջին շնորհն
յորում ժամու լինքն կամի, զոր
միայն Ա͞Ծ տայ թարց արդեան
ում, և յորժամ ինքեան հաճոյ
է։ Դարձեալ․ եթէ ոք համա_
տայցէ, թէ որ առատանանայ սատ
բարեօք ժամանակաւորօք, նաև
յետոյ 'ի համադերձելումն առա_
տասցի հրճուանօք մշտնջենա_
կանօք, ընդդէմ այսմ ասի 'ի
սաղմոսին։ Տեսցեն արդարքն․
մ͞տ․ զփարթամն 'ի դժոխս, և 'ի
վ͞ր նորին ծիծաղեսցին, և ա_
սասցեն, ահաւասիկ այր, որ ոչ
արար զա͞Ծ իւր օգնական, այլ
յուսացաւ 'ի բազմութի͞ն փար_
թամութեանց իւրոց, և զօրացաւ
'ի նանրութե͞ն իւրում։

## Յաղագս Խոտման աշխարհի:

## Գլուխ Երեսունեւեօթներորդ:

Ճշմարիտ խոտումն աշխարհի է հրաժարելն 'ի ժամանակաւորաց իրաց այսորիկ աշխարհի, և 'ի վայելչութենէ կենցաղոյս, յարժանապատուութենէ՝ 'ի յառաջնորդութենէ հոգևորաց, և մարմնաւորաց, և բացաքարշել զմիտսն 'ի համայնից բարեկամաց մարմնաւորաց, և 'ի բարուց կենցաղականաց, մ'ո յուսոյ յաւիտենականի երանութեան: Ըստ այս խրատէ զմեզ երանելին յոհաննէս 'ի գիրս կաթուղիկէից ասելով. մի սիրէք զաշխարհ, և որ ինչ յաշխարհի է: Օ այսպիսի խոտումն ունեաց երանելին

լին օգոստինոս , որում անհաճոյ
էր որ ինչ իրակլեւր յայսմանէ
աշխարհէ ։ Վասնզի մինչ խօ_
սակցէր ընդ մօր իւրում յայտ_
քաղցրաբար , 'ի մէջ խօսից ան
հաճոյանայր և գռեհկանայր ն̃մ
աշխարհ հանդերձ հեշտալեօք
իւրովք ։ Նմանապէս երանելին
ակնէս , կատարինէ , չէչիլիա ․
և այլք կուսանք զթագաւորուն̃
աշխարհի , և զամ̃ զարդ կեն_
ցաղոյս այսորիկ խոտեցին վասն
սիրոյ տ̃ն մերոյ Յ̃ի Ք̃ի ։

Սա խոտումն , և առ ատելու_
թ̃ն աշխարհի պարտի նե_
րածել զմեզ մեծագունեղ ան
հաւատարմութ̃ի նորին , զոր 'ի
վախճանի ցուցանէ սիրողաց իւր
ոց ։ Վասնզի զայս անհաւա_
տարմութիւն ցուցին աշխար_
հայինք ստեղծողին իւրեանց ,
զոր 'ի յաւուր ծաղկազարդի

փառաւորապէս առընկալան, ելանելով ընդ առաջ նր՛, և երգելով օրհնեալ որ գաս յանուն տն՛ Թագաւո՛ր իսրայէլի, բայց յետ այսորիկ յաւուրն ուրբաթու յառաջ ընթացան յատենի պիղատոսի աղաղակելով՝ 'ի խաչ հան, 'ի խաչ հան զդա՛, զի եթէ ոչ էր չարագործ այրն այն, ո՛չ մատնէաք զնա քեզ ։ Նա՛ մինչ կախեր 'ի խաչէն՝ ծաղր առնէին զնա ասելով, եթէ որդի ես Այ՛ փրկեա՛ զանձն քո․ և զոր արմաւենեօք, ծաղկօք, և ոստովք վերընկալան՝ դալար փշովք պսակեցին, բրօք և ձաղանօք գանեցին ։

Նա՛ զնա որում զհանդերձս 'ի ճանապարհի տարածեցին, նախ քան զխաչն յամենից զգեստուց մերկացուցին, և կողոպտեցին, և զփառս առընծայեցեալս՝ 'ի

նախատինս փոխարկեցին ։ Ու_
խոտումն և առ ատելութին նոյն_
ոյ պարտին ներածել զմեզ
փառանդն որ յառաջագայի՛ ի սի_
րոյ աշխարհի ։ Քանզի ասէ
յակոբոս ・ բարեկամութին այ_
սորիկ աշխարհի թշնամութին է
ա̃ծ ・ և որ կամիցի բարեկամ
լինիլ այսորիկ աշխարհի, համա
կացուցանի թշնամի Ա̃Յ ・ վն̃
զի աշխարհս այս՝ ատեաց զք̃ր
յն̃, և զն̃մ բարեկամս նորին,
ո̃պ ինքն ասաց առաքելոցն առ
'ի մխիթարութին, եթէ աշխարհ
զձեզ ատեաց, գիտասջիք զի
նախ քան զձեզ զիս ատեաց ։

Ո յայտայանդիմանութին ճշմար
տի խոստման ունի նա, որ
ոչ հոգայ զազնուութէ սեռին,
ոչ խնդրէ զփափկութին մարմ_
նոյն, ոչ բաղձայ հարստութեց,
և ոչ բարձրագունի աստիճանի

պատուոյ։ Այսպիսի եղև մօսէս, զորմէ գրէ առաքեալն ասելով։ Հաւատով երբ մեծացաւ մօսէս, ուրացաւ զինքն դոլ որդի դստերն փարաւոնի, ընդդէմ ազնուութեան։ Ընտրեալ մանաւանդ ընդ ժողովրդեանն Այ չարչարիլ, քան մեղօք ունիլ զժամանակաւոր զուարճութ̃ի, ընդդէմ փափկութ̃ն։
Մեծագոյն հարստութ̃ի համարեալ զնախատինս Քրի, քան զգանձս եգիպտացւոց, ընդդէմ հարստութեանց, վասն զի վերահայէր 'ի վարձահատուցանողն։
Օայլ յայտյանդիմանութիւն ճշմարտի խոստման աշխարհիս ունի նա, որ ոչ շողոքորթութ̃բ աշխարհիս համոզի, և ոչ 'ի սպառնալեացն զարհուրի, ոչ պարսաւանօք, և ոչ գովութ̃եք մարդկայնօք շարժի, և

և ոչ առնելութ՟ք , և ոչ շնոր֊
հին մարդկան առ սէր աշխար֊
հիս յօժարեցուցանի ։ Յայսմիկ
խոստման էր առաքեալն , մինչ
ասաց ։ Ա՟մ ինչ իբրև զկղկ֊
ղանս համարիմ , զի զՔ՟ս շա֊
հեցայց ։

Ա յայտյանդիմանութիւն սոյ
խոստման աշխարհիս ունի
նա , որ՚ի սիրոյ և՚ի հրապուրա֊
նաց աշխարհի , յայնժամ՝նա֊
խապէս զինքն հրաժարեցուցա֊
նէ , յորժամ զայնպիսիս՚ի գործ֊
ածել ոչ զօրէ վ՟ս ծերութե , և
աղքատութե ․ ուստի յայնժամ
ոչ թէ ինքն թողու զաշխարհ ,
այլ թողանի ինքն յաշխարհէ ։
Նման , թէ որքան բազումք
գտանին , որք յայնժամ՚ի մե֊
ղանչելոյ լռեն՝ յորժամ այլ ևս
մեղանչել ոչ կարեն ։

## Յաղագս Ճնշման մարմնոյ։

### Գլուխ Հնգետասաներորդ։

Ճշմարիտ ճնշումն մարմնոյ է՝ յորժամ ոք կամաւորապէս տանջէ զմարմինն իւր, պահօք, հսկմամբք, աղօթիւք, խորգօք, և ճաղանօք, ՚ի բաց կալով ՚ի կերակրոց, և յըմպելեաց հեշտալեաց, ո՟պ զի ՚ի համայնս մարմինն հոգւոյն ենթարկեսցի։ Զայս արար առաքեալն, մինչ ասաց, Ճնշեմ զմարմին իմ և այլն։ Նա՛ յուդիթ որ էր գեղեցիկ և մանկամարդ, և այրի, և փարթամ, յետ որոյ եկաց ընդ առն իւրում զերիս ամս, և զվեց ամիս ՚ի կուսութեան իւրմէ՝ զգեցաւ զխորգս ՚ի վ՟ր միջաց իւրոց, և պահէր զամ՟ աւուրս, բաց

բաց ՚ի աճուրց համագիտակմանաց։

Ու սէր ճնշման մարմնոյ պար-
տի ներածել զմեծ մեծ օգ-
տութիւն, որ յառաջագայի ՚ի
նմանէ․ վասն զի ՚ի նիհարեցմա-
նէ մարմնոյն զօրանայ ոգին յի-
րաւութիւս հոգեւորս․ ըստ այնմ
առաքելոյն որ ասէ, զի յորժամ
տկարանամ՝ ( մարմնով ) յայն-
ժամ զօրանամ, ( հոգւով ) և
հակադարձեալ, ՚ի փափկութենէ
մարմնոյն պօրութիւն հոգւոյն ՚ի
հոգեւորսն խափանարի․ ըստ այնմ
օգոստինոսի, փափկացեալ մար-
մինն բոցակիզէ, և ծախէ զհո-
գին, որպէս հուր զեղէգն։

Օ այտյանդիմանութիւն ճշմարտի
ճնշման է, մինչ մարմնոյն
ոչ լինի փափկութիւն, այլ միայն
հարկաւորն ջամբի, ըստ այնմ
առաքելոյն, որ ասէ, պարտա-
կան եմք ոչ մարմնոյ, զի ըստ
մարմ-

մարմնոյ կեայցեմք․ մի՞ զի փափ-
կութիւնն զայժ առաւել հեշ-
տալիս պահանջէ, քան զոր հար-
կաւորութիւն վերախնդրէ․ իսկ
հարկաւորութիւն սակաւուք և
խոշորիւք գոհանակ լինի ։ Ա՛
առաքելոյն ստորակցէ զջայրն՝
որ հեռանել փափկութեն ասելով․
եթէ ըստ մարմնոյ կեցջիք, մե-
ռանելոց էք, իսկ եթէ հոգւով
զգործս մարմնոյ սպանանիցէք,
կեցջիք ։ Արդ՝ յայտնիք են գործք
մարմնոյն․ որ․ պոռնկութիւն ,
կռապաշտութիւնք , կախարդու-
թիւնք , պղծութիւնք , վէճք ,
կռիւք , տարաձայնութիւնք , մար-
դասպանութիւնք , արբեցութիւնք ,
զեղխութիւնք , և նմանք սոցին ․
զի որք զայսպիսիս գործեն՝ զար-
քայութիւն Այ ոչ ժառանգեն ։
Ա՛ և այլ յայտյանդիմանու-
թեն , յորժամ ըստ խրա-
տուցն

տուցն Յ՟ի Ք՟ի ասէ զանձն
իւր յայսմիկ աշխարհի : Քանզի
ինքն Տէրն ասէ , որ ոչ ատէ
զհայր իւր , և զմայր իւր , նաև
իսկ զանձն իւր , ո՛չ կարէ իմ
աշակերտ լինել , զոր մեկնելով
գրիգոր ասէ : Յայնժամ ևս
բարեպէս զանձինս մեր ատեմք
յորժամ ոչ հաւանիմք մարմնա_
կանաց ցանկութեց նորին , յոր_
ժամ բեկեմք զբաղձանս նորին ,
և մարտնչիմք ընդդէմ փափ_
կասիրութեանց նորին : Իսկ որ
զանձն իւր ոչ սանձահարէ 'ի
ցանկութեանց՝ , դահավիժէ
զինքն յորոգայթս սատանայի ,
ըստ այնմ որ ասի : Եկղեսիաս
տիկեայ , 18: Եթէ տայցես
անձին քում՝ զցանկութիւնս ն՟ր ,
արասցէ զքեզ 'ի խնդութիւն
թշնամեաց · որ՟ դաւելու մատ_
նեաց զհզօրագունեղն սամփ_
սոն

սոն փղշտացւոց առ 'ի խաղալ
նովաւ։

Օյայտյանդիմանութիւն ճշմար-
տի ճնշելութեան ոչ ունի
նա, որ միայն զորովայն, և զբե-
րան իւր զսպէ 'ի կերակրոց՝ և 'ի
ըմպելեաց փափկալեաց, բայց
զլեզու իւր ո՛չ սանձէ 'ի բանից
ապօրինաւորաց, և ոչ զտեսո-
ղականն, զլսողականն, զճաշա-
կողականն, զհոտոտողականն,
և զշօշափողականն սանձահարէ
'ի հեշտալեաց, և ոչ զսիրտն 'ի
խորհրդոց, և 'ի ախորժմանց
փափկականաց։ Քանզի դոյն
ինչ է զսպել զբերանն, և զո-
րովայնն 'ի կերակրոց, ուր սիր-
տն և հնգեքին զգայութիւնքն
տածին հեշտութ՟ք։ Ուստի ասէ
ոսկեբերանն, որք հրաժարին 'ի
կերակրոց, և առնեն զչար,
հետևին դիւաց, որոց ոչ կե-
րա-

ըսկուր , այլ միշտ չարութիւն առաջի կայ։

## Յաղագս Օշջման։

### Գլուխ Երեսունիններորդ։

Ճշմարիտ զղջումն է ցաւ՛ վն մեղաց կամաւորապէս առեցեալ ըստ քանակութե եւ որակութե յանցուածոյ՝ համադերձ առաջադրութ խոստովանելոյ , եւ բաւարարելոյ , յառաջեկեալ 'ի հաճոյարարէ շնորհէ։ Քանզի ցաւ՛ բնական, կամ ցաւ՛ թարց շնորհաց ոչ ինչ օգտէ կամ զօրէ։ Զքանակութի ցաւոյն բացատրեաց երեմիա, մինչ ասաց. զսուգ միածնի արա քեզ։ Զայս պատուիրէ տրն 'ի ձեռն յովելեայ ասելով. պատառեցէք զսիրտս ձեր։ Նա_

այս

այս պատառուածն զօրէն փուշքն, բևեռքն, բիրքն, ձաղանքն, խաչն, և գեղարդն, որք տատառեցին զմարմին Յ֊ի Ք֊ի Տ.Ն մերոյ ։

Ճշմարիտ զզջումն սակաւ գտանի ըստ գրիգորի որ ասէ · գիտելի է, զի են ոմանք՝ որք նաև թօղլով զաշխարհս՝ զամ զոր ինչ ունին նուիրեն, և սակայն 'ի բարիսն զոր առնեն ոչ փղձկատրտանան ։ Ոչ միշտ հաւատալի է գոլ ճշմարիտ փղձկատրտութի, ուր երևին հեծումն և արտասուք ։ Քանզի յերկիւղէ դժոխոց, կամ 'ի մտածմանէ իրիք վնասու, կամ 'ի բնականէ ցաւոյ, կամ 'ի բնականէ ցաւակցութե բազմիցս սովորք են յառաջագայիլ այն ակուէք, յորժամ յիշէ ոք զմեծութի չարեաց իւրոց՝ և ըղ-

սա

սատակութիւն տանջանաց Յոր
դնոյ : Եւ Ճշմարիտ զղջումն
պահանջի ցաւ զամենից մեղաց
գործեցելոց , և զամենից բա_
րեաց բացաթողեցելոց, և զա_
մենից շնորհաց զանցառուեցելոց
ինքեան, և հատուցանելն . նաև
որք պատճառաւ իւրով գործիլ
կամ զանցառնիլ կարացին:

Եւ Ճշմարիտ զղջումն պարտի
ներածել զմեզ եթէ հա_
ւատարմաբար մտածիցեմք, թէ
զինչ 'ի ձեռն մեղաց կորուսաք .
յր , զոգին սբ հանդերձ համայ_
նիւք պարգևօք իւրովք, և զնմ
առաքինութիւն հաճոյականս ,
զբարեկամութիւն երրորդութեն ,
և զընկերակցութիւն երկնայնոց
դասուց : Դարձեալ . զինչ շա_
հեցաք 'ի ձեռն մեղաց . յր . զյա
ւիտենական մահն , զանէծս հօր
Են , ըստ այնմ սաղմոսի որ

 ասէ,

ասէ. Անիծեալք լիցին որք խո-
տորին 'ի պատուիրանաց քոց ։
Օատելութի տն մերոյ Յի
Քի, որ ասէ զամենեսեան
որք գործեն զանօրէնութի, և
զհեռացումն ոգւոյն սրբոյ, որ
նաև բացահեռացուցանէ զինքն
'ի խորհրդոց, որք են լծարց ի-
մացութե ( ով աստ յիմաստու-
թե ) յոյժ առաւել յայտնի-
սեաց գործոց չարեաց։ Քանզի
այսոքիկ չարագոյնք և զզուելա-
գոյնք են քան զպատիժս գե-
հենոյն, ով աստ ոսկեբերանն ։
Առնոյնն պարտի ներածել զմեզ
մեծագունեղ օգտութի որ յա-
ռաջագայի 'ինմանէ ։ Քանզի
փոքրագունեղ զզջումն զբնաւս
արատս հոգւոյն ջնջէ, զմահ
յաւիտենական մահացուցանէ,
զօրհնութի հօր Այ շարաբե-
րէ, զբարեկամութի որդւոյն
Այ

Ա՟Ծ վերահատուցանէ, զընտանեկցութիւն ոգւոյն սրբոյ, և զընկերակցութիւն վերնայնոց քաղաքացեոց վերանորոգէ :

Նա՛ որքան և սակաւ իցէ զողջումն առաւել բաւարարէ, քան զմեծագունեղ առատաբաշխութի ողորմութեանց : Այսուքիկ ամենեքեան բաւմիցս կշռեցեալք 'ի կշռոջ սրտին, լինին ներածողականք ճշմարիտ զղջման :

Օյայտյանդիմանութի ճշմարտի զղջման ունի նա, որ այնքան դարշի 'ի զազրութե՛ մեղաց, մինչ զի զամ՟ պատիժ քահարանին յօժարապէս ընտրիցէր, քանթէ ընդդէմ քաղցրագունեղին Ա՟Ծ զմեղ ինչ երբէք առնիցէր · և որ մանահանդ զինքն մատուցանիցէր պատժոց դժոխայնոց ամ՟ եղխազարաց, քան երբէք յայնմ հետէ

'ի յառաջագրութենէ զմեղս ինչ գործիցէր, զոր ընտրելն գու-աւէ նաև օգոստինոս։ Այլ որ զպատիժ ամենից մարտիրոսաց յօժարագունեղաբար տանիցէր, որպէս զի այսու կարիցէր ար-դիւնաւորել, զի յայնմհետէ ոչ երբէք գործիցէր զմեղ ինչ։ Այլ որ ա̃մ վշտակրութեանց հի-ւանդաց, և աղքատաց զինքն յօժարաբար ընծայիցէր, ո̃պ զի վ̃ն մեղայն՝ արժանապէս Ա՛Յ բաւարարել կարիցէր։

Ո յայտնադիմանութիւն սորա զգզման ունի նա, որ թէ պէտ զգործեցեալ մեղս սաստ-կաբար ողբայ, սակայն շարու-նակաբար զկնի ցաւոյն զնոյն կամ զայլ մեղս գործել ոչ զար-հուրի։ Ընդդէմ այսմ՝ աւի 'ի գիրս սիրաքայ. որ մկրտի 'ի մե-ռելոյ, և դարձեալ շօշափէ ըզ-

մե-

մեռեալ, զինչ օգուտ է լուծա-
ցուածն նորին: Նմանապէս որ
զանցելոց մեղաց ցաւի, և ամե-
նեւին զմեղս բացաթողուլ ո՛չ
յառաջադրէ, ի՞մ, զհպարտու-
թի, զնախանձ, զբարեկամու-
թի մարմնաւոր, զհեշտութիւն
մարմնոյն, զանիրաւ ստացուածս,
զորմէ ասէ օգոստինոս. մեղքն
ոչ թողանի, եթէ բառնեցեալն
ոչ հատուցանիցի: Ընդդէմ
այսմ ասի՛ ի գիրս սիրաքայ. մինն
շինօղ, և միւսն աւերօղ, զինչ
օգուտ է նոցին, եթէ ոչ աշխա-
տանք: Ո՛երէ որ զմեղաց ցա-
ւի. չինէ, որ 'ի կամս մեղանչե-
լոյ մնայ: Այնպիսւոյ շինուա-
ծոյ ասէ օգոստինոս. 'ի չար կա-
մաց եղեալէ տռփուածն, և մինչ
տռփման լինի ծառայուածն, ե-
ղեալ լինի սովորութի, և մինչ
սովորութեան ոչ լինի ընդդի-
մա-

մացումն, եղեալ լինի հարկա_ ւորութիւն ։

## Յաղագս Խոստովանութե ։

## Գլուխ Քառասներորդ ։

Ճշմարիտ խոստովանութիւն է՝ պարզ բացայայտումն մեղաց թարց պատրուակի առաջի օրինաւոր քահանայի ։ Զայս պատուիրեաց տէրն մինչ ասաց բորոտաց. երթայք ցուցէք զանձինս ձեր քահանայից, և այլն ։ Նա երանելին յակոբոս ասէ, խոստովան եղերուք միմեանց ըզ մեղս ձեր ։ Եւ ճշմարիտ խոս_ տովանութիւն պահանջի, զի լիցի ամբողջ, մաքուր, խոհեմ, հա_ ւատարիմ, և կատարեալ ։ ըստ այնմ ողբոց 2։ Հեղ ոպ̃ զջուր զսիրտ քո առաջի տն Տն քո ։

Ի

Դ՝ հեղման՝ նշանակի ամբողջու-
թիւն, քանզի մեղքն զորոց ոչ
երբէք եղեալ է խոստովանու-
թին, առաջադրութ̃ե չեն ասե-
լիք միջահատաբար, այլ որ ինչ
կարէ 'ի միասին մատչիլ, բո-
լորն համանգամայն, առաջի
միոյ քահանայի պարտ է հեղա-
նիլ, (ոպ̃ զջուր) Եւր նշանա-
կի թէ պարտ է լինիլ պարզ,
և մաքուր, ոչ յերկիւղէ ծա-
ռայականէ, կամ 'ի բռնադա-
տութ̃ե առնելի է խոստովա-
նութ̃ի, այլ մաքրապէս և պար-
զապէս վ̃ս Ա̃Յ ։ (զսիրտ քո)
Օւր նշանակի խոհեմութ̃ի, քան-
զի ո՛չ են խոստովանելիք միայն
բանք և գործք իրագործեցեալք
և զանցարարեցեալք, այլ նաև
խորհուրդք աղտեղիք, և յամա-
ռակամք ախորժմունք, անկարգ
դիտաւորութիւնք, խառնեալք

կամք , թիւր դատողութիւնք ,
յանդգնականք կարծողութիւնք :
Վասնզի ասէ որոգինէս . թէ
յայնմիկ աւուր ամբաստանես_
ցեն խորհուրդք զհոգիս , կամ
ջատագովեսցեն . ոչ խորհուրդքն
որք եղիցին յայնժամ, այլ որք
այժմ են ՚ի մեզ , որոց ոմանք
նիշք ոմ ՚ի մտմնջ թողանին ՚ի
սրտի : ( առաջի տ՟ն ) Իւր նշա_
նակի համատարմութիւն, և կա_
տարելութիւն : Նմանօքն ըստ ճա_
նաչման Ս.Յ են խոստովանե_
լիք . քանզի ուր մեք ճանաչեմք
զմի մեղ , նա յիմաստութեան
իւրում ճանաչէ զհազարս :

Ու ճշմարիտ խոստովանութիւն
պարտի ներածել զմեղ ստոյգ_
թողութիւն մեղաց, և մաքրութիւն
հոգւոյ , ըստ այնմ յօհաննու
որ ասէ . եթէ խոստովանիմք
զմեղս մեր, հաւատարիմ է Ա.Ծ,
զի

զի թողցէ զմեղս մեր, և մաք-
րեսցէ զմեզ յամենից անօրէ-
նութեանց։ Նա՛ վն զի առ թողու-
թին, և առ քաւութիւն ստիպի
հայր, և որդի, և ոգի սբ, ըստ
այնմ. Թէպէտ Ած ծանեաւ
զընաւա՛ն, սակայն սպասէ ձայնի
խոստովանութե։ Քանզի ունի
զպատճառ, որպէս զի վասն
քոյ ներկայանայցէ քհն, ունի
և զպատճառ ներելոյ հայր,
և զորինչ կամի որդին, կամի և
հայր, և ոգին սբ։

Ո յայտայանդիմանութի ճշմար-
տի խոստովանութե ունի
նա, որ զամն մեղս որպէս զջուր
հեղու, զի ոչ մնայցէ գոյն, ոչ
'ի հեղման կաթան. ոչ պարար-
տութն, կամ համ, ոչ 'ի հեղման
իւղոյ, կամ արեան. և ոչ հոտ,
ոչ 'ի հեղման գինւոյ, կամ քա-
ցախոյ։ Արդ՝ գոյնն վերամնայ,
յոր-

յորժամ տան մեղքն, և վերապահի առիթն, և գրգռումն առմեղս, ոպ̃ եղանի 'ի յորկրամոլութե, և 'ի պոռնկութեան: Սերամնայ պարարտութի, կամ հա̀մ, յորժամ տան մեղքն, և թագուցանի քաղցրութիւնն, և երկարատևութի հեշտութե, յորում ըմն̃ բոլորովին կլանի. ըստ այնմ որ ասէ, եմուտ ոպ̃ ջուր 'ի փոր նր̃, և ոպ̃ ձէթ ընդ ոսկերս նր̃: Սաղմոս: 108: Ո՞նայ հոտն, մինչ տան մեղքն և լռի վատահամբաւութի կամ չար օրինակն, և գայթակղութին այլոց: Իսկ Ճշմարտապէս խոստովանողն յայտնէ զինքն մեղն, զնախընթացս և զհետևօղս մեղաց:

Յայտյանդիմանութի Ճշմարտի խոստովանութեան է, մինչ խոստովանի ոք զմեղս իւր

թո_

Թուով, կշռով, և չափով։
Թուով խոստովանելի է, այսինքն, զանգամս մեղաց. վասն զի խոցուածն բազմիցս վերակրկնեցեալ յամրագոյն բժշկի։ Պարձեալ չափով, յորժամ ոք խոստովանի զերկարատեւութիւն մեղացն, քանզի որ երկարատեւագոյն հիւանդանայ՝ շուտագոյն մեռանի։ Կշռով, այսինքն, ըստ ծանրութեան. քանզի ծանրանայ մեղքն 'ի սրբազանէ տեղւոջէ, որպիսի է գերեզմանատուն, կամ եկեղեցի. 'ի սրբազանէ տաճարէ, կամ յանձնէ, ո՛չ եթէ կղերիկոս է որ վնասի, եթէ միայնակեցուհի է, կամ ամուսնացեալ ընդ որում մեղանչի։

Յայտյանդիմանութիւն սորայ խոստովանութեան է, մինչ ոք վասն այսորիկ խոստովանի զի մի՛ գուցէ ասիցի անհաւատ, կամ ո՛չ

զար-

զօրագոյն համարեսցի , կամ մի՛ կարասցէ բացասիցի նմ՛ հաղոր_ դութիւն, և յամօթ լիցի ։ Այս պէս խոստովանիւր սաւուղ , զի մի՛ գուցէ 'ի մարգարէէն սա_ մուելէ առաջի ժողովրդեանն զամօթ կրեսցէ ։

## Յաղագս Ապաշխարութեան ։

### Գլուխ Քառասնեւմեկերորդ ։

Ո՛Ր մարխտ արտաքին ապաշ_ խարութիւն է՝ հրաժարումն յօրինաւորաց , մինչ զապօրինա_ ւորաց ներումն խնդրեցեալ լի_ նի , ոմն ասէ գիրն ։ Այսպէս ապաշխարօղք և վանականք հրա ժարին 'ի մնոց , խոտեն զզգեստս փափուկս , պահեն զծոմն , պարապին հսկմանց , տանջեն զինքեանս ձաղանօք , պահեն զլռու_

զլռութիւնս , բեկեն զյատուկ
կամս , և հրաժարեն՝ ի բազմաց
հեշտութեց, որք նչ օրինաւորք
իցէին , եթէ ոչ երբէք զապօ_
րինաւորս խրակեալք իցէին :
Զայս հրամայեաց տէրն, և երա
նելին յօհաննէս մկրտիչ, ասե_
լով : Ապաշխարեցէք և այլն :

Առ ճշմարիտ ապաշխարութի
պարտի ներածել զմեզ հար
կաւորութին , զի թարց նմին
ոչ գտանի կեցութի , ըստ այնմ
զոր ասէ տէրն . Եթէ ոչ ապաշ_
խարիցէք ամենեքեան նոյնպէս
կորնչիցիք : Ս. օգոստինոս ասէ .
մեղք թէ փոքերք իցեն , և
թէ մեծք , ոչ կարեն մնալ ան_
պատիժք : Աւստի տէրն եցոյց
դաւթայ զապաշխարանս վասն
մեղի նորին, այնու, զի թուեաց
զժողովուրդ իւր , որ զի կամ
կրիցէր վեօթն ամ սով 'ի վե

եր_

երկրի, կամ զերիս ամիս ըղ-
վրէժխնդրութի թշնամեաց ,
և կամ զերիս աւուրս զմահ ,
և դաւիթ ընտրեաց ինքեան ,
և ժողովրդեան՝ զհասարակա-
կան պատուհասն մահուան ։
Յայսու նշանակի թէ իւրաքանչ-
իւրոք 'ի հարկէ վ̃ս մեղաց իւր-
ոց , կամ պատժիցի 'ի դժոխս,
զոր նշանակեն եօթն ամքն սով-
ու . կամ 'ի քաւարանի , զոր
նշանակէ բռնութի թշնամեաց
յերիս ամիս . կամ 'ի պատժում
ժամանակաւորի , զոր նշանակէ
մահն երից աւուրց ։ Յայսպէս
և մեզ օգուտ է ընտրել զա-
պաշխարանս թեթևագունեղս ,
և զիսկոյն անցանօղս ։

Ցայտյանդ իմաստութի ճշմարտի
ապաշխարութեան է , պար-
տաւոր համաչափութ̃մբ պատժոց
ընդդէմ մեղաց , զի ըստ քա-
նա-

նակութե մեղաց լինի քանա_
կութի և ծանրութի պատժոյն ·
ըստ հեշտութե մեղաց, լինի և
դառնութի պատժոյն · ըստ եր_
կարատևողութե մեղաց, լինի
և երկարատևութի պատժոյն ·
և ըստ բազմութե մեղաց, լի_
նիցի և բազմապատկութի պատ
ժոյն, ըստ այնմ յօհաննու ։

Արարէք զպտուղս արժանիս
ապաշխարութե ։ Քանզի որպ
իւրաքանչիւրք հիւանդութիւնք
մարմնոյ ունին հարկաւորապէս
զիւրաքանչիւրս դեղս, և ոչոք
դեղ է այնքան գործունեայ, որպ
զի բժշկեսցէ զամն հիւանդու_
թիս, այդպէս և իւրաքանչիւրք
սեռք մեղաց ունին զմասնաւոր
ապաշխարութիւն ։ Ս̃ զի ոչ
ուղղակի վերուղղի հպարտու_
թիւն 'ի ձեռն ողորմութե, ոխն,
և նախանձն 'ի ձեռն աղօթից,

աղա_

ագահութին 'ի ձեռն ծոմապա_
հութեան, հեշտախտութին, 'ի
ձեռն հսկման, և այլն : Եւ
զհպարտութէ ուղղապէս բա_
ւարարութի լինի խոնարհու_
թբ. զագահութէ 'ի ձեռն առա
տաբաշխութե ողորմութեց .
զհեշտախտութէ 'ի ձեռն տան_
ջեցման մարմնոյ խորգօք, և
ձաղանօք. զորկրամոլութենէ 'ի
ձեռն ծոմոց, զշատախօսութէ
'ի ձեռն աղօթից, զնախանձու
'ի ձեռն սիրոյ, և 'ի ձեռն թո_
ղութե անխրաւութեց . զյափշ_
տակութէ, և զանիրաւ ստաց_
մանց, 'ի ձեռն վերահատուց_
մանց, և այլն : Եթէ ոք ( ոպ
ասէ ոսկեբերանն ) ոչ կարիցէ
լցուցանել զնմ կարգ բաւարա_
րելոյ, յայնժամ մարդասէր տրն
ընդունի զոր և կցէ վերուղղումն.
յայնժամ վն անխրաւաբար ա_
ռէ_

ուեցելոց իւրայ զօրէ ծոմապա_
հութիւն, եթէ ոչ կարէ վերա_
հաստուցանել. և եթէ ոչ կարէ
ծոմապահել՝ զօրէ աղօթքն.
եթէ ոչ կարէ աղօթել վասն
հիւանդութեան, բաւական է
առա̃ծ բարի կամքն։

Օյայտյանդիմանութիւն սատոյ
ապաշխարութե դնէ Ինո_
չէնցիոս։ Սուտ ապաշխարութի
է մինչ ապաշխարողն՝ ի պաշտօնէ
պալատի արքունեաց, կամ իրա_
կութե շահեկանի՝ որ թարց մե_
ղաց ինակիլ ոչ երբեք կարէ՝ ոչ
բացահեռանայ. կամ եթէ զա_
տելութի 'ի սրտի կրիցէ. կամ
եթէ զմնաստուց զոր արար իւր_
աքանչիւրումեք ոչ բաւարարի_
ցէ. կամ եթէ զմնաստուց կրե_
ցելոց մնասողին ոչ ներիցէ. կամ
եթէ զգէնս ընդդէմ արդարու_
թե կրիցէ։ Պարձեալ. սուտ

է ապաշխարութին, յորժամ մեղ իմն զգալի, եւ զայլմէ անհոգացեալ լինի։

## Յաղագս Յարատեւութեն։

### Գլուխ Երեսուներկուերորդ։

Ճշմարիտ յարատեւութի՛ւ է յանձնառակի կրթութի՛ւ 'ի գործս բարիս, համապատրաստ կամ ջան առ կատարելութիւն հոգեւորաց շնորհաց, եւ մտադրաւ ունել պահպանումն առաքինութեանց մինչեւ ցմահ։ Նու այս հրամայէ Տէր 'ի յայտնութե ասելով. լեր հաւատարիմ մինչեւ 'ի մահ, եւ տաց քեզ զպսակն կենաց։ Զայս ունեաց նաեւ յօբ մինչ ասաց, մինչեւ 'ի պակասիլն իմ ոչ բացահեռանամ յանմեղութէ իմմէ։ Նա՛ տօբիթ, որ

զմար-

զմարմինս մեռելոց թագուցա_
նէր 'ի տան խորում, և 'ի մէջ
գիշերի թաղէր. Թէպէտ Թա_
գաւորն վ՟ այսորիկ հրամայեալ_
էր կողոպտել և սպանանել
զնա:

Ու սէր յարատևութե՟ պար_
տի ներածել զմեզ մեծա_
գունեղ օգտութ՟ին որ յառա_
ջագայի 'ի նմանէ: Քանզի նոյն_
աւ ա՟մ գործ բարի, և ա՟մ
առաքինութի՟ պսակի. և բոլոր
կեցութի՟ մարդոյն 'ի նմ՟ կայա_
նայ, ըստ այնմ տ՟ն մերոյ Յ՟ի
Ք՟ի որ ասէ: Որ յարատևեսցէ
մինչև իսպառ, նա կեցցէ: Թարց
որոյ ոչ ոք առաքինութի՟ կամ
գործ լինի վարձատրելի, թարց
որոյ ա՟մ կատարելութի՟ 'ի յոչ
ինչ վերածի: Քանզի զինչ շահ
եղև առաքելոյն, և մատնչին
յուդայի, այսու զի ո՟րն զնա

ընտրեալներ յաշխարհէ, զի՛նչ
օգուտ եղև նմ՝ երկարատևու֊
թին ընտանեկցութե ընդ Յո՛ի
Քնի, զի՛նչ սր քարոզութին,
զոր բազմիցս 'ի նմանէ լուեալ֊
էր, զի՛նչ օրինակք, զօրութիւք,
սքանչելիք, զորս 'ի նմանէ տե֊
սեալ էր, զի՛նչ ընկերակցութին
առաքելոցն· զի՛նչ շնորհ՛ն շարա֊
բերեցեալ ինքեան առ 'ի քարո֊
զել, և առ 'ի առնել զսքանչե֊
լիս։ Քանզի նմ ընդ այլոց առա
քելոց ասաց, երթայք քարոզե֊
ցէք, զի մերձեալ է արքայութին
երկնից, զհիւանդս բժշկեցէք,
զմեռեալս յարուցէք, զբորոտս
սրբեցէք, զդևս հանէք։

Ո յայտյանդիմանութին ճշմար
տի յարատևութե ունի նա,
որ ո՛չ մն սիրոյ կենաց, ո՛չ մն
երկիւղի մահուան, ո՛չ մն սպառ֊
նալեաց, և ոչ մն խոստմանց
բա֊

բացահեռանայ 'ի յուղղութէ.
ոպ̃ շուշան ոչ երկնչելով սաստ·
եթէ ես զայս արարից, ա̃ր,
զմեզս, մա՛հ է ինձ: Իսկ մատա
թիա ասէ: Իսկ եթէ ա̃մ՝ ապա-
հնազանդիցի թագաւորին ան-
տիոքոսի, զի հեռանայցէ իւրա
քանչիւր 'ի ծառայութէ օրինաց
հարց իւրոց, ես և որդիք իմ, և
եղբարք իմ հնազանդիմք օրի-
նացն Ա.Մ: Գրաճիչ մ-ր լսցի
Ա.Ծ:

Ո յայտյանդիմանութիւն սորյ
յարատևութէ ունի նա,
որ զօրութէ իւրմէ ստաբար
համարձակի, թէ անկանիլ ո՛չ
կարիցէ: Յայսմանէ ծնանի վս-
տահութի սրտի, և այնու ոչ
ունի զպահպանութի ինքեան,
և այսպէս անկարելի լինի մար
դոյն կարել 'ի սրբութէ յարա-
տևել: Թէպէտ առաքեալք

լիցին յաշխարհի, և ոչ ունի-
ցին զպահպանութիւն ինքեանց,
կարիցին անկանիլ: Օրինակ
ունիմք զդաւիթ, որ զմարդաս-
պանութիւն, և զշնութիւն գոր-
ծեաց, զի անհոգ եղև զպահպա-
նութենէ իւրոյ աչաց:

Գովեցեալ լիցի ամենակալողն, որ շնո-
ձայնս տրամադրեաց: Ամն:

ԽՄԱ-

# ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԱՆԵԼՈՅ

## Մեծին Աղբերտի ։

ԳԱնկատ առնեմ զինէն առ քեզ , ո՜վ Ած Հայր ամենասուրբ հանդերձ համայնիւք արտասուօք , և արիւնային կաթլեօք սիրելագունեղի Որդւոյ քոյ առ այս , զի դեռևս ոչ ժամանեցի առ ընկիզքն միոյ ուրուք առաքինութեան այնու կատարելութե՛ , ո՛ր աստէն գրեցաւ ։ Սակայն խնդամ զի զնմա առաքինութիս

թիս կատարելագունաբար ու-
նեսցուք, քան զոր մարդկային
իմացումն զօրիցէ ըմբռնել:
Խոստովանիմ առաջի քոյ Տէր,
զի երանեալ է 'ի ներկայիս, և
երանելագոյն եղիցի 'ի հանդեր-
ձելումնա, որ զայսոսիկ առա-
քինութիւնս ունի այնու կատա-
րելութեամբ, որպէս աստէն գրեցեալք
են, թէպէտ գուցէ նուազ բա-
ւականք իցեն առ կեցութիւն:
Նաև հայցեմ 'ի քէն Տէր հան-
դերձ ամենայն ըղձիւ որդւոյ քոյ, և
ոգւոյն սրբոյ. և ամենից ստեղծ
ուածոց, որպէս զի տայցես ինձ
զընտրողութիւն 'ի մէջ առաքինու
թեանց հաճոյականաց, և բնա-
կանաց, և նմանութեանց առա-
քինութեանց: Ո՛վ որոք ընթեռ-
նուցու զայս նիւթ, կամ զայս-
մանէ լուիցէ, կամ խոկայցէ,
դու ամենակարող Տ. պար-
գևեա

զեւեամ նմ̃ գոնեա զմիակ Ճշմարիտ և զկատարեալ առաքինութի՛ն: Ստոյգ եմ, զի որ ունի ՚ի քէն ո̃ր զմինն, ունի ՚ի միասին զա̃մն, և որ աճի ՚ի միում, աճ̃ի համանգամայն և յամենեսին, և որ ոչ ունի զմինն, զոչ ոք ունի, վ̃ զի ամենեքեանք միաւորեալք են ՚ի շնորհս: Ամէն:

Լզերեցաւ գրգուկ երանելոյն մեծին Րւղերոսի, յաղագս Ճշմարտից, և կատարեցելոց առաքինութեանց հոգւոյ, որ և Դրախտ հոգւոյ յորջորջի:

՚Ի գոհութիւն Սրբազանեղի Երրորդութե̃: Ամէն:

## Ցանկ Գլխոց Գրոցս։


Յաղագս Սիրոյ։ գլ։ ա։ Երես։ 3։
Յաղագս Խոնարհութեան։ գլ։ բ։ 14։
Յաղագս Հնազանդութեան։ գլ։ գ։ 21։
Յաղագս Համբերութեան։ գլ։ դ։ 30։
Յաղագս Աղքատութեան։ գլ։ ե։ 37։
Յաղագս Ողջախոհութեան։ գլ։ զ։ 44։
Յաղագս Պահեցողութեան։ գլ։ է։ 51։
Յաղագս Խոհեմութեան։ գլ։ ը։ 61։
Յաղագս Արիութեան։ գլ։ թ։ 69։
Յաղագս Արդարութեան։ գլ։ ժ։ 74։
Յաղագս Բարեխառնութեան։ ժա։ 81։
Յաղագս Յաւանկցութեան։ գլ։ ժբ։ 87։
Յաղագս Խաղաղութեան։ գլ։ ժգ։ 93։
Յաղագս Ողորմածութեան։ գլ։ ժդ։ 100։
Յաղագս Համաձայնութեան։ ժե։ 107։
Յաղագս Հաստատութեան։ գլ։ ժզ։ 113։
Յաղագս Առատաբաշխութեան։ ժէ։ 119։
Յաղագս Ճշմարտութեան։ գլ։ ժը։ 126։
Յաղագս Հեզութեան։ գլ։ ժթ։ 132։
Յաղագս Հաւատոյ։ գլ։ ի։ 135։
Յաղագս Յուսոյ։ գլ։ իա։ 141։
Յաղագս Երկիւղի։ գլ։ իբ։ 146։


Յաղագս

Յղգս Խնդութեն։ գլ. իգ։ 153։
Յղգս Տրտմութեն։ գլ. իդ։ 160։
Յղգս Երախտագիտութեն։ իե։ 167։
Յաղագս Բարւոյ Նախանձու հո-
գւոյ։ գլ. իզ։ 174։
Յղգս Ազատութեն։ գլ. իէ։ 182։
Յղգս Կրօնի։ գլ. իը։ 189։
Յղգս Համբերութեն։ գլ. իթ։ 198։
Յղգս Պարզամտութեն։ գլ. լ։ 203։
Յղգս Լռութեն։ գլ. լա։ 210։
Յղգս Միայնակեցութեն։ գլ. լբ։ 217։
Յղգս Խոկման։ գլ. լգ։ 222։
Յղգս Բնարողութեն։ գլ. լդ։ 234։
Յղգս Մրոսխակցութեն։ գլ. լե։ 244։
Յղգս Ապաւինութեն։ գլ. լզ։ 249։
Յղգս Խոստման աշխարհի։ լէ։ 260։
Յղգս Ճնշման մարմնոյ։ լը։ 266։
Յղգս Ողջման։ գլ. լթ։ 271։
Յղգս Խոստովանութեն։ գլ. խ։ 278։
Յղգս Ապաշխարութեն։ գլ. խա։ 284։
Յղգս Յարատեւութեն։ գլ. խբ։ 290։

Գ. երգս այս դրախտ հոգւոյ նոցին։
անուշահոտ ծաղկամբ է լի.
մարդաբարբառ ընթերցողաց,
բուրէ 'ի քիմս ըղձ հոտ նենի։
Յայն պէմայոհածն ըմբռնողաց,
այնու յաւէտ պճայլողաց,
աղբէ ընծայել պախտա մարմնոյ,
և հաղորդել անախտ նեկայ։
Բ. ուաջենեայ է բոլ ոսկայ.
ծոցիլ բնաւեց նոցանոց գործոյ.
յորմէ արդեօք, և առ որ զարծեն,
յայտյայնդեման առնէ հոգւոյ։
Յոչ որք նեղծմամբ գործեն զբարեն,
և պախտ մարմնոյ 'ի ներքս ուունեն,
առ յուցանէ գոլ մաքրալից
սրտամաքան խնձոր զնոսին։
Ս. է նրպան ենչ հոգելից.
յորոամ են դեղք ձիրայ բնաւեց.
մեայն զանոյն փենչման խնդրէ,
Յիեաբար փայ ամենեց։
Բ. դ ընդրեայոսք մեջ 'ի փեաանէ։
զզնոյհ և սեր մեղ պայմանէ,
զի մ' գոյէ արփաջնեցեմք,
զդքախտըն հոտոյ 'ի խոհմանէ։

ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ZUUՌ · Арм · ССР
им. А. МЯСНИКЯНА

好 3

205